

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ	Կախարդութիւնք (Բանախոսութիւն Պ. Փ. Ռէ- նիտուի)	* * *
ՎԷՊ	Գնանք ընթերց (Տփղիսի կեանքից)	Վ. ՓԱՓԱԶԵԱՆՅ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	Երգ Հովուին	Ե. Զ.
	Կեանք	Յ. ՍԵԹԵԱՆ
ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ	Ժողովրդական դասեր	Լ. Բ.
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ	Ասիա	Յ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ
ՔԱՂՈՒԾ ՇԱԲ. ԼՐՈՅ	Արտաքին, ներքին, Ազգային	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կղալիէ ալ Մոնթէքէն) Թարգմ.	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆ Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ	տարեկան	Կէս ոսկի Օսման .
»	վեցամսեայ	Քառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դան. արծաթ
Մէկ թերթին գինն է	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛ր եւ է գրուածին կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
Ղալաթիա, Նորասուէկեան ևս

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐԱՍ

Ղալաթիա, 13 Սեպտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈՆՈՆԱԿԱԳՐՈՅ

3 աժիւ Լոնտրայի վրայ պանքայի	409 3/8
3 » » » (վճռակն)	409 1/4
» » Բարիս » (պանքայի)	23
» » » » (վճռակն)	23 07 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Քոնսուլատ

Գոհեկան

Երեկ երեկոյ Գոհ. (Միաց. D. Սէրի Գ. Կ. 44 30	
Պորային գոցուեցին վերջը	45 4
Բերայի մէջ	45 5
Առաւօտուն բացուեցաւ	45 40
Բարձրագոյն քին	45 28
Նուազագոյն	45 8
Կէս օրին	45 49
Փոխառութիւն 1858) A. Սէրի Գ. Կ. 26	
» 1862)	
» 1860)	
» 1863) B.	45 40
» 1872)	
» 1865)	
» 1869) C.	45 8
» 1873)	

Իւնիֆիէ Եգիպտական

Երեկ իրիկուն գոցուեցաւ	70
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.	71 40
Կէս օրին	71 40

ԲԱԺՆԵՏՈՒԹՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Գ. Կ. Սէրի Գ. Կ. —
Բրէտի Ժէնէրալ	» » Օսմ. » —
Պանք տը Գոնս	» » » » —
Սոս. Ֆանժ Է վալէօր.	» » » » —
Բորամուէյ	» » » » 290
Բաւմէլիի երկաթուղի	Քր. 36
Օպիկոսիօն տը Բրիօրիթէ	» —
Բաժնեկթուղթ Լաւրիօմի	» 55

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ՊՂԶ. ... 400
Օ Քրանքնոց	» ... 87 32
Անգլիական ոսկի	» ... 440 40
Բօլ Իմբերիալ	» ... 90 44
Քրիմից	» ... 51 45
Ռուսկի թղթադրամ	» ... 9 48
» արծաթ	» ... 89 30
Ֆիօրին	» ... 8 35
Մէճ. արծ. (տարբ.)	» ... 408 2
Վէցնոց	» ... 402 25
Հինգնոց	» ... 402 20

Մէթալիք	» ... 97 20
Պղինձ	» ... —
Բողթադրամ	» ... —

ԵՆԻՐՈՊԱԿԱՆ ՊՈՐԱՍ

Լոնտոն, 24 Սեպտեմբեր, ժամ 5 վայր. 15 Երեկոյ	
Անգլ. քօնսուլտէ	99 5/4
Օսմ. » » » Սէրի Գ. Բացուեցաւ	43 15 1/4
» » » » » Գոցուեցաւ	44 1 1/4
» » » » »	26 1/2
» » » » »	45 1/2
» » » » »	44 1/8
Օթօման 1871	68
Փոխառութիւն 1877	81
Պանք Օթօման	40 1/8
Ռուսական փոխառ. 1873	93 1/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	64 1/8
» » » » » (Բրիօրիթէ)	87 1/4
Տայրա Սանիէ	64
Տօմանիալ (փոխառ. Րօշիլտ)	84
Հունգարական պարտաթուղթ 40/0	—
Փոխառութիւն Բարիկի վրայ	—

Վիէննա, 24 Սեպտեմբեր, ժամ 4 Երեկոյ	
Փոխառութիւն Լոնտոնի վրայ	426 45
Օսմանեան երկաթուղի	18 20
Բարիզ, 24 Սեպտեմբեր, ժամ 3 վայր. 45 Երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	109 50
» » 3 0/0	80 65
Օսմանեան քօնսուլտէ Սէրի Գ. Բացուեցաւ	44 40
» » » » » Գոցուեցաւ	44 45
» » » » » Սէրի Բ.	45 50
» » » » » Գ.	44 40
Օսմանեան երկաթուղի	36 50
» Իէփի Բաժնեկթուղթ	—
Պանք Օթօման	506 25
Գրէտի Լիօնէ	537 50
» Ֆօնիէ	4316 25
Բաժնեւորման Լիօնի	4240
Սուէզի ջրանցք	2021 25
Ռուսական 5 0/0 1877ի	98 3/4
Իտալական Ռանթ	94 75
Եգիպտական միացեալ	323 75
Սպանիական (արտաքին)	56 7/8
Բրիօրիթէ Թիւրք	355
5 0/0 Հելլենական	286 25
2 1/2 Լոնտրայի վրայ	25 26

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐԱ

Բարիզ, 24 Սեպտեմբեր, ժ. 10 վ. 30 Երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	109 60
Օսմանեան քօնսուլտէ Սէրի Գ.	44 27 1/2
Իւնիֆիէ Եգիպտական	324 37 1/2

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34-րդ ՏԱՐԻ

1885 ՍԵՊՏԵՄԲԵՐ 14

ԹԻԻ 3787

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ԿԱՆԱՐԳՈՒՀԻՆԵՐ

ԲԱՆԱԹՈՒԹԻՒՆ Պ. Փ. ՌԵՆԻԱՌԻ

(Շար. նախորդ խոսք)

Սատանան նախանձեղով Աստուծոյ վրայ, կը փափաքի անոր նման իւր հաւատարիմներն հաւաքել, որոյ համար «ապա» հնարեց, ուր կը կատարուին խել մը կրօնական ծէսեր: Երկու տեսակ գլխաւոր «ապա» կայ, որք իրարու կը նմանին. մեծովն գաւառի մը բոլոր կախարդներն կը հրաւիրուին: Այս արարողութիւններն զիշեր ատեն տեղի կ'ունենան, ընտրեալ տեղին է անմշակ վայր մը, անապատ մը, երեսի վրայ ձգուած գերեզմանատուն մը, կախաղանատուն մը, աւերակ դղեակ մը եւ կամ վանք մը: Սապայի երթալու միջոցն խիստ պարզ է՝ ամէն դէպ իւր կախարդուհւոյն անկնունք մեռած տղայոց թոքերովն յատկապէս պատրաստուած իւղ մը կուտայ, եւ կախարդուհին այդ իւղով իւր մարմինն կ'օծէ՝ մի քանի կախարդական բառեր արտասանելով, աւելի մը ձողին վրայ կը նստի, եւ յանկարծ օդին մէջէն «ապայ» համար որոշեալ տեղը կը փոխադրուի. այժմէն կը համարձակիմ ըսելու համաձայն համայն բժշկայ թէ՛ այս ճարպերն կը պարունակէին շաբաթայոց, շեփախի, եւ ճանրախի (solané vireuse, mandragore, belladone) հիւթերն, որք բանդագուշակութիւն գրգռելու յատկութիւնն

ունին: Տեսէք այս 16րդ դարու պատկերն կախարդուհի մը կը ներկայացնէ, որ այս իւղով կ'օծուի, մինչդեռ ուրիշ մը տան ծխահանէն կը մեկնի ձողի մը վրայ հեծած: Երբեմն ալ կախարդուհին իւր դէմքն կը կանչէր որ զայն կոնակն առնելով օդին մէջէն կը տանէր. ահաւասիկ Ռ. Փ. Յ. Կալիւսի աստուածարանական գրքէն ելած պատկեր մը որ այս վերջին տեսարանն կը նկարէ: Եթէ այս ճամբորդութեան մէջ անձրեւ դար, կախարդն քանի մը կախարդական բառեր ըսելով կրնար պահպանուիլ:

Սապան հասնելուն պէս պէտք էր զննելու էին թէ սատանայական նշանն կը կրէին. թէնիկէ երեւելի նկարիչն կախարդաց «ապան» հասնելուն մի նշանաւոր պատկերն չինած է, եւ որ ահաւասիկ. ի Սապա հասնելուն պէտք էր երկրպագել սատանային, որ այս հաւաքման կը նախագահէր. դահի մը վրայ բազմած էր ընդհանրապէս, այժի մը ոտքերն, գլուխն ունէր (քան աստուածային հին յիշատակն), ահագին պոչ մը եւ ջիղջի մը թեւերն կը կրէր. երբեմն ուրիշ ձեւ կ'առնուր (կախարդուհեաց բանդագուշանաց համաձայն). զորօր. աւանակի, նոճուոյ, սեւ կատուի եւ եւ:

Սապայի մէջ ամէն բան սովորականին հակառակ տեղի կ'ունենար: Սատանային կ'երկըրպագէին թիկունքնին անոր դարձուցած, վերջն հանդիսաւոր կերպով կ'ուրանային զԱստուծո, Ս. Կոյսն եւ սուրբերն, եւ սատանային դաւանելին կը խոտովանէին. ահաւասիկ 16րդ դարու պատկեր մը որ այս ծէսերն կը ներկայացնէ: Դեռ արատուութիւններն չի լրացած, սատանան նորահաւատներն կը մկրտէր, բայց ոչ մկրտութեան հասարակ սովորութեալը, ապա կ'ստիպէր

դայնս կոխկռտել խաչի մը վրայ: Վերջն իւրաքանչիւրն լաթի մը կտոր առած, թիկունքնին դէպ ի ներս շրջանակ մը ձեւացնելով կը պարէին: Այս գիշերն հասածին պէս ամէնն ի միասին սատանային կ'երկըրպաղէին, եւ նմա կը մատուցանէին իրենց յարգանքներն: Յետ այսորիկ խնջոյքն կ'ընկըտէր, ամէն ոք սեղան կը նստէր, ամէնէն մեծ կախարդուհին այսինքն «ապային թագուհին, սատանային քոյն կը բաղմէր: Ընդհանրապէս, արջնագորտեր, չմկրտուած տըղայոց թոքեր եւ սիրտեր կ'ուռէին: Ճաշէն վերջ կ'սկսէին պարել. սատանան ո՛չ կը պարէր եւ ո՛չ ալ նուագողաց կ'ընկերանար: Մառի Տէգվիկն անուանեալ խեղճ օրիորդ մը, զոր Վալանտինի մէջ կենդանոյն այրեցին, կը պատմէր, թէ օր մը «ապային մէջ երգուած սա խեղկատակ երգն լսած էր «Անդեռեւ կամ անաղէ աման» . խաղերն ամենապիղծ էին. հետաքրքիրներն դիւարանական դրութեանց մէջ կրնան կարդալ:

Սապայի վերջանալու ատեններն սեւ պատարագն կ'սկսէր. սատանան սեւ շուրջառ մը հագած սեղանին վրայ կ'ենէր եւ կը պատարագէր թիկունքն սեղանին դարձնելով. այս ամէնն շատ հետաքրքրական էին. փոխանակ նշխարի, սատանան կըր տակ մը եւ կամ խոշոր սակաղին մը կ'ընծայէր: Պատարագէն վերջ կրկին կը պարէին մինչեւ ց'արշալոյս, արագաղն խօսելուն պէս ամէն ինչ կը լրանար, ամէն ոք տունընջեան դալուստէն սարսափելով գիշերային թռչնոց նման կը փախչէին: Կախարդուհին իւր ճանրուն վրայ գտնուող թշնամեաց հունձքերուն վրայ կը ցանէր «ապային մէջ ընդունած իւղերն եւ թոյներն. եթէ ճանբան հեռու ըլլար, դեւն զայն ընտանի կենդանիի կը փոխէր մինչեւ որ իւր տունն հասնէր:

Իմ պատմածներս կարելի է յիմարտլան կը թուի ձեզ եւ կը զարմանաք թէ՛ մարդկային կարողութիւնն այսչափ մոլորեալ էր, եւ թէ յիմարութեան համատարած եւ տարափոխիկ ախտն կ'ստիպէր խեղճ բանդագուշտիներն խոստովանիլ իբր այս ամէն ոճիրներուն տէր, զոր ձեզ պատմեցի. բայց ալ աւելի ցնորական պիտի երեւի ձեզ՝ դատաւորաց կախարդներու դէմ բռնած ընթացքն. այս ամէնուն վրայ լուծեամբ

պիտի անցնէի, եթէ երբէք ասոնցմէ բռնչկութեան նկատմամբ նշանաւոր տեղեկութիւններ չի կրնայինք հետեւցնել:

Կախարդութիւնն յատուկ ոճիւր մ'ըլլալով՝ կախարդներն ընդհանուր օրինօք չէին կրնար պատժուիլ. Խննովկեսառ ութերորդ պապը մասնաւոր կոնդալիալ մը կախարդաց փաստաբան ունենալն կ'արդիւնէ:

Երբեմն դատաւորներն հասարակ մարդիկ էին, որպէս Վալանտինի մէջ, ուր շատ մը կախարդներ դատուեցան. ուրիշ անգամ դատաւորաց կէսն միայն հասարակ ժողովրդէն էր, իսկ կէսն կղերական դասէ եւ երբեմն ամէնքն ալ կղերական դասին կը վերաբերէին:

Կախարդուհին կամ կախարդ կասկածեալ կիներն ընդհանրապէս իւր ընտանիքէն կը մատնուէր. անձի մը կախարդ ըլլալուն նշաններն հետեւեալներն են. գիշերաչալիկութիւնն, դրացիի մը տունն մտնելն՝ որոյ զուական քանի մ'օրէ վերջ կը մեռնէր, կամ ախոռի մը մէջ մտնալն ուր բնակող կենդանիներն կը հիւանդանային կամ ճահիճի մօտ գտնուած աւուր կարկուտ դալն, դրացեաց նոր ճիշերն լսելն, իւր բուրհանի բռնուիլն, բերնի փրփրիլն, դելումն, եւ:

Եթէ ուրանար կախարդ ըլլալն, դատաւորներն հաստատուելու ապացոյցներ կը մնտաէին. կնոջ անուան իւր կախարդ լինելուն հզօր ապացոյցներէն մին էր. կարելի է չի հաւատաք իսկ, երբ ըսեմ թէ Փայէն, Սառագէն, Պիւլէա, Վէռտիէ, Ժօլիպուազ անուանուիլն հաստատիչ նշաններ էին, որպէս կ'ապացուցանէ Տէլ-Ռիօ. երկրորդական նշաններն են դունատութիւնն, անմաքրութիւնն՝ որ կը կարծէին թէ բազմիցս անասնոց ձեւ առնելէն առաջ կուգայ իգական սեռի վերաբերիլն ալ ապացոյց համարուած էր, զի ընդհանրապէս կիներ կ'ենթարկուին այս հիւանդութեան (հազար կախարդուհիի դէմ մէկ կախարդ հաղիւ կայ). այլաձեւ հազուատն ալ նշան մ'էր եւ եւ: Այս վերոյիշեալ նշաններն խիստ մեծ ապացոյցներ էին:

Դատաւորներն ձերբակալումն կը հրամայէին, կալանակալներն փողոցի մը անկիւնը կախարդուհոյն կ'ապառնէին, ետեւէն անոր վրայ կը յարձակէին, բայց կը վախնային անոր լուրձոնքէն եւ փոխէին, թէ մի

գուցէ իրենց վրայ նետելով, մահ պատճառէ։ Վերջապէս դատաւորաց առջեւ կը տանէին, որք զայնս գաղտնապէս կը հարցաքննէին։

Այս ողորմելիներուն դէմ դործուած միջոցներն Պօկէէն կ'ընդօրինակեմ, որ 1000 էն աւելի կախարդուհիներ այրել տուած լինելուն վրայ կը պարծի։ «Կախարդուհիներու համար ապացոյցներ փնտուելու չէ, փոքրիկ կառնած մը բաւ է զայնս ձերբակալելու համար։ Եթէ կասկածեալն գետինն նայի կամ առանձին միմիջէ, գէշ նշան մ'է։ Կասկածեալներն բաղանիք երթալու չ'են. ասի, ըստ Թոէզլիի եպիսկոպոսին, մեղք է։ Եթէ ամբաստանեալը չի խոստովանի սաստիկ բանտի մը մէջ գնելու է։ Տօնի օրերն իսկ զայնս շարջարեւն ներեալ է։ Եթէ ժողովուրդն որ եւ է անձ մը իբր կախարդ ամբաստանէ, այն անձը կախարդ է։ Զաւակն իւր հօրը դէմ կրնայ բողոքել։ Այս պարագային մէջ անուանարկ մէկը իբր վկայ կ'ընդունուի։ Տղաքներն ալ ձայն ունին։ Վկայութեանց զանազանութիւնն զայն արդար չէր հրատարակեր, բաւ էր որ բոլորն ալ զայն կախարդ յայտարարեն։ Պատիժն հուրն է, նախ պէտք է զայնս խեղդել եւ ապա այրել։ Գիշերաչըլիկ կախարդներն ողջ ողջ այրելու է։ Առանց ապացոյցի պատիժն արդար է, բաւ է որ կասկածելի լինի եւ եւ»։

Կախարդներն նախ հարցաքննութեան կ'ենթարկէին, եւ կը ջանային որ ինքն պատմէ իւր ոճիրներն. երբեմն երբ բանդագուշանքն վառուած ըլլար, եւ կամ շարջարանքներէն վախնար, անմիջապէս կը խոստովանէր. եւ ինչո՞ւ ստէր այնպիսի դատաստանի մը առաջ, զոր ձեզ պիտի պարգեւ հետեւեալ օրինակաւ, եւ զոր բառ առ բառ Ալիսէնֆէուտի գրքէն ընդօրինակուած եմ. «Կախարդուհի մը կը խոստովանի թէ մեռած տղայ մը գերեզմանէն հանած և կերած է. զայն այրել կը վճռեն. էրիկն դէմ կը կենայ, եւ կը խնդրէ որ դոնէ ստուգելու համար գերեզմանը բանան եւ տղային դիակը քննեն. դատաւորներն ասոր ուշադրութիւն չըրին եւ ըսին. «Բաւ է որ ամբաստանեալն խոստովանեցաւ, կարելի է որ դիւային կարողութեան մէկ երեւոյթն էր

դիակին գտնուիլն»։ ասոր վրայ կինը ողջ ողջ այրուեցաւ»։

Քանի մը բաղաբաց մէջ հարցաքննութեանն վերջ փորձեր կ'ընէին, նա մանաւանդ Ալմանիոյ մէջ ջրով կը փորձէին, զրպարտեալ կինն գետը կը նետէին. եթէ ընկղմէր անմեղ էր, իսկ եթէ ջուրին երեսը մնար, կախարդուհի էր, զայն կ'այրէին. այսպէսով կասկածեալին վերջը միշտ մահ էր։ Գաղղիոյ մէջ ընդհանրապէս դաշոյնով կը փորձէին. ի ներկայութեան դատաւորին վիրաբոյժ մը զայն հանուեցնելով աչքերը կը կապէր եւ սրածայր դաշոյն մ'առած նորա մարմնոյն վրայ հազար եւ մէկ խոց կ'ընէր, դիւական նշանն փնտուելու համար. ինչպէս գիտէք, այս նշանին տեղն անդգայ ըլլալով պիտի խոցուէր առանց արեան կաթիլ մը եղնելու եւ ցաւ զգալու։ Քիչ մը վերջ պիտի ապացուցանեմ թէ ի հարկէ ստիպեալ այս կէտն պիտի գտնուէր։ Անգղայ կէտը գտածնուն պէս, մահուան վճիռը տրուած էր. բայց կը պահանջէին որ ամբաստանեալն իւր յանցանքներն բերանացի խոստովանի։ Արդարեւ, պարոններ, թէպէտ չեմ ուզեր ալ առաւել սեւցնել այս նկարագրութեան տախտակն, բայց քիչ մը վերջ սոցա գիտական բացատրութիւններն տալու դիտաւորութեամբ է որ կը խօսիմ. Լիւիզէն պիտի ընդօրինակեմ գործածուած շարջարանաց նկարագրութիւնը, մի եւ նոյն ատեն ձեզ պիտի ցուցնեմ Արրահամ Բալինկի կախարդախօսական գրքէն առնուած շարջարանաց մի քանի պատկերներն։

Կախարդներն խոստովանեցնելու համար գործածուած ամենապարզ շարջարանքն կոճեղն է (brodequin), այսինքն ամբաստանեալին սրունդներն երկու տախտակի մէջ գնելով չուանով կը պրկէին, ոտքերուն եւ տախտակաց մէջ տեղն անկիւններ դնելով մուրճի հարուածով կը մխէին, մինչեւ որ սեղմուած սրունդներն ճնշուելով ոսկերաց ծուծն վաղել սկսէր. եթէ խեղճն, իւր անմեղ ըլլալն պնդէր, լարածագութեան (estrapade) կ'ենթարկէին, այսինքն դատաւարաւելոյն ձեռքերն ձեղունէն չուանով մը կապելով, ոտքերէն ծանրութիւններ կը կախէին եւ այսպէս կը թողուին մինչեւ որ ցաւոց աղաղակներ արձակէր. դատաւորն կը հրամայէր խոստովանիլ. եթէ մերժէր,

դահիճներն ձողերով կը ձաղկէին, ցնցումն իր ցաւերը կը կրկնապատէր, և թէ կըրկին չի խոստովանէր, դատապարտեալն ճախարակի վրայ անցուցած չուանով մը մինչ ց'ձեղուն կը բարձրացնէին եւ ապա քարա-յատակին վրայ կը ձգէին. ասիկայ բազմիցս կը կրկնէին, մինչեւ որ դատապարտեալն խոստովանէր: Եթէ լարածդուծիւնն ալ չի բաւականանար խոստովանցնելու համար, պրկոցի (chevalet) կը դիմէին, այսինքն դատապարտեալն սրանկիւն դերանի մը վրայ ձիահեծի մը նման կը նստեցնէին, ոտքերուն ծանրութիւններ կը կապէին այնչափ որ անկիւնն մին մէջ մանար, եւ որչափ որ մերժէր, այնչափ ալ ոտքերուն վրայ ծանրութիւններ կ'աւելցնէին: Մարի Քառլիէ 13 տարեկան հասակին մէջ պրկոցի դատապարտեցին (1647). մի քանի ժամեր այս դերանի վրայ կեցաւ, երեք անգամ ծանրութիւններ աւելցնելէ վերջ խոստովանեցաւ, եւ ողջ ողջ այրուեցաւ. իւր մատաղ հասակին վրայ ժողովրդեան դուծը չ'չարժելու համար արշալոյսի դէմ այրել սրոյնցին:

Եթէ այս տանջանքներով չը յաջողէին խոստովանել տալ, մանեակի չարչարանաց կը դիմէին. սիւնի մը վրայ երկաթեայ մանեակ մը կախուած էր, ներքին կողմն սրածայր ակռաներով, դատապարտեալին վիզն մանեակին մէջ կ'անցնէին, ոտքերն տաքութեամբ կարծրած երկաթներով կ'այրէին. ցաւն կ'ստիպէր շարժիլ, որով մանեակի երկաթեայ սրածայր ճիւղանները վիզը կը մշտնէին:

Ինչո՞ւ այսչափ չարչարանաց մէջ զըրպարեալն չէր խոստովաներ. պէտք չէ մոռնալ թէ խոստովանելուն անմիջական հետեւանքն այրուիլն է, եւ թէ շատ անգամ այս խեղճերն իրենց հիւանդութեան արդասիւնն եղող անզգայութեամբն չէին ըզգար, որպէս այսօրեայ բանդադուշներն: Երբեմն ալ ցաւոց չափազանցութիւնն զիրենք կ'աղեցնէր. իրենց դէմն կը տեսնէին, եւ զայն տեսնելին պարծանօք կը սէին, եւ կը յայտնէին թէ իրենց քաջալեր կը կարգար, եւ իրենց ցաւերն կը նուազեցնէր. ասիկայ լուծեան հրապոյր (charme de taciturnité) կ'անուանուէր ըստ փիլաթանից:

Երբեմն կախարդուհին տանջանաց չի

կարողանալով դիմանալ, անմիջապէս կը խոստովանէր եւ իւր վրայ զրպարտեալ ոճիրները կը սլատմէր. և շատ անգամ միտքն եկած անձանց իրեն հետ սապա երթալնին կը զրպարտէր, որք անմիջապէս ձերբակալուելով նմանօրինակ կը դատուէին եւ իրեն պէս կը պատժուէին: Անգամ մը դատապարտեալը դատաւորին կինը մատնեց. անմիջապէս ձերբակալուեցաւ եւ պատժուեցաւ:

Չարչարանքներէն վերջը կախարդուհին զանազան պատժոց կ'ենթարկէին, բայց եթէ կախարդութիւնն ապացուցանող որ և է ապացոյց մը չ'իւնէր, կ'արտաքսէին, քիչ անգամ կը գլխատէին, երբեմն տաք ջրով լի սանի մը մէջ կը դնէին, բայց ընդհանրապէս խեղդելէ վերջ կ'այրէին. երբեմն ալ մահն աւելի դաւանացնելու համար կը խորկէին. մի քանի կախարդներ ողջ ողջ թաղեցին Վալանսիէնի մէջ, որպէս 18 ամեայ օրիորդ մը, որոյ սարսափելի աղաղակները դահիճին սիրտն իսկ ցաւցոցին, որ մերժեց շարունակել, բայց դատաւորն ամենայն անտարբերութեամբ հրամայեց կատարել:

Փայտակոյտի վրայ այրել տանելու համար շատ անգամ սայլի մը ետեւն կը կապէին եւ փողոցէ փողոց կը քաշուտէին երեսն դէպ ի գետին ցելսին, փոշիին մէջ եւ քարայտակներու վրայ:

Լուիզ դահիճի մը կարգ մը հաշուեթըրթերն (facture) գտած էր, որոց մէջ ամէն մէկ չարչարանաց համար յատուկ գումարներ հաշուած էր. իւրաքանչիւր ցուցակ կը վերջանար 2 «-ով (20 փր.), ձերմակ ձեռնոցներուն լուացմանն համար:

Ահաւասիկ, պարոններ, առանց չափազանցութեան, կախարդութեան նկարագիրն. իմ դերս ամբողջացնելու համար պէտք է որ ձեզ հետ ընենմ կախարդական պատմութեան նշանաւոր անցքերն եւ ձեզ ցուցնեմ, թէ ո՞ր աստիճան այս սարսափելի հիւանդութիւնը տարածուած էր սակից 200 տարի առաջ:

Նշանաւոր կախարդուհիներու պատմութիւնն այնպիսի անձէ մը կ'սկսի, որոյ անունն ձեր հետաքրքրութիւնը պիտի շարժէ, որովհետեւ Թրանսայի ամենամեծ փառքերէն մին էր: Այս անձն Ժան տ'Արքն է, զոր ֆը-

բանասկան կղերականներէ բաղկացեալ դատարան մը հրոյ դատաւարտեց, սատանան իրեն օգնութեան կանչելով անգլիական բանակին յաղթելուն համար: Այս ողբալի մահէն հինգ տարի վերջ լուր տարածուեցաւ թէ Վօտ դաւառի մէջ խել մը կախարդներ կան, որք մարդակերութեան յատկութիւնն ունէին. նախ իրենց զաւակներէն կ'սկսէին: Պօլինէն դատաւորն եւ Էօյտ քննիչն հազարաւոր խեղճեր դատաւարտեցին: Այս խեղճերն այնչափ բանդադուչեալ էին որ անձամբ կ'երթային խոստովանիլ՝ թէ մեռեալներ դերեղմանէն հանելով խաչած եւ կերած էին: Անգամ մը երիտասարդ զիւղացի մը իւր հետ միայն քանի մ'օրէ ի վեր ամուսնացեալ մանկամարդ կիներ մատնեց իբր կախարդ, ինքն ալ ուրախութեամբ յանձնառու եղաւ մի եւ նոյն վայտակոյտին վրայ այրուիլ: Գատաւորներն երբէք ապացոյցներ չ'էին փնտռեր, այլ միայն խոստովանութեանց հաւատը կ'ընծայէին. չ'էին երեւակայեր երբէք, թէ խոստովանողներն յիմարներ էին:

Այս ատենէն հազիւ 20 տարի վերջն Առայ քաղաքին մէջ բանդադուչութեան համատարած հիւանդութիւն մը ծնաւ. խել մը կիներ որք «ապալի» ներկայ գտնուած ըլլալին կը խոստովանէին, զիւերն իրենց բուրհանն կը բռնէր, տեսակ մը անդաշտութեան մէջ կ'իյնային, եւ առաւօտուն արթննալով տարօրինակ բաներ կը պատմէին: Մօնաթուէի ժամանակագրութիւնն մեզ կը պատմէ թէ բազմաթիւ անձինք ողջ ողջ այրուեցան բայ ի նոցանէ, որք դատաւորաց դումարներ կը վճարէին չի պատժուելու համար:

1501 ի ատեններն յանկարծ Գերմանիոյ մէջ կախարդներ տեսնուեցան: 1484 ին իննովկենտ 800 պապը հրովարտակաւ մը կը հրամայէր կախարդաց դէմ ամենայն սաստկութեամբ վարուիլ. անմիջապէս 41 Պիւռպէցի կանայք բռնուելով ողջ ողջ այրուեցան տղաքներ խաչած եւ կերած ըլլալուն համար. բայց ուշադրութեան առէք, թէ ո՛չ ոք չ'էր բողբեր իւր զաւակն կորսնցուցած ըլլալուն համար. զրարտեալներն պարծենալով իրենց ոճիրն կը պատմէին. ասիկայ բաւական էր դատաւորաց համար: Գօնաթանսի մէջ 48 հոգի այրուեցան «ապալի»

ներկայ գտնուելուն համար. ասոնցմէ մին կախարդական բառով մը փոթորիկ հանելուն համար անմիջապէս մահուան դատաւարտուեցաւ:

Մի եւ նոյն ժամանակ սատանան Գամպրէի վանքն կը մտնէ, եւ մայրապետներուն մէջը կը բնակի. ամէնն իմիասին կ'սկսին մլաւել, հաչել, վաղվաւել, ծառերու վրայ ելնել եւ դետինն տապալիլ. պապի կողմէ զրկուած դիւահան մը բան մը չի կրնալով ընել, ստիպուեցան զայնս (մայրապետներն) դատել եւ պատժել:

1507 ին նոր համատարած հիւանդութիւն մը սկսաւ Քաթալոնէի մէջ, եւ 50 կիներ այրուեցան:

1504 էն մինչ 1525 Լոմպարտիոյ մէջ Գոմի մեծ համատարած ախտը տիրեց. հսկումն Գոմինիկեաններու վերապահուած էր. հիւանդութեան նշաններն ձեզ նկարագրածներս են: Բուժելու եղանակն սարսափելի էր: Գոմինիկեաններն տարին 1000 կախարդէ աւելի կ'այրէին:

Այս ատեն դիւամոլութիւնն (դեւէ բընակեալ ըլլալ կարծելն) ամէն ուրէք տիրած էր. Էսթելայի մէջ 150 կիներ խարաղանեցին, Սառակոսայի մէջ 100 հատ այրեցին: Իւվէութի, Պաիլիթի, Հեսլեռան, Քէնթուփի կրօնաւորուհիներն կ'ոռնային, կը վազվտկէին եւ կը մլաւէին: Ամսթերտամի սրբուհիներն մի եւ նոյն ժամանակի մէջ կը բռնուին: Տօցի մենամօլ մը ողջ տղաքներ կերած ըլլալուն համար այրուած է: 80 կախարդուհիներ այրուած են Սափուայի, 400 Թուլուզի եւ գրեթէ այնչափ Ափինեօնի մէջ:

1580 ին Լօւէնի մէջ մեծ համատարած հիւանդութիւն մը ծնաւ ուր Միքօլառէմի 900 էն աւելի կախարդներ եւ կախարդուհիներ այրել տուաւ. մի եւ նոյն ատեն Պօկէ Սէն - Քլուի մէջ 600 էն աւելի այրել կուտայ, եւ Տը-Լ'Անքուը հազարաւորներ Ստորին Նահանգաց մէջ: Ասոնց մէջ մեծ քանակութեամբ տղաքներ կային: Պօկէ նոցա մատաղ հասակին համար այրել չ'էր դատեր, այլ բոցի մէջ զգացնելէ վերջ խեղդել կուտար:

Քահանաներն պատժէ ազատ չ'էին. Կօֆուէտի խեղճ ժողովրդապետը կախարդական խնդիրներով շատ ղրաղելուն բանդադուչել

սկսաւ եւ ողջ ողջ այրուեցաւ կոյր աղջկան մը հետ :

Պէտիի մէջ մի եւ նոյն օրն մինչեւ 21 կախարդ այրուեցան : Զ'էի չափազանցեր , երբ կ'ըսէի թէ կախարդութիւնն ամենամեծ պատերազմներէն աւելի աղետալի եղաւ մարդկային ազգի :

Պարոններ , ահաւասիկ հոս կը լրանայ կախարդութիւնն եւ կամ ըստ բազմաց Բոլ-ժօն դեմոնոլոգիան . հիմա դիւային յիմարութեան մի ուրիշ ձեւին վրայ սիւսի խօսիմք . այսինքն այսակրութեան (possession) եւ կամ կրող դեմոնոլոգիան . վրայ :

(Մնացեալը յաջորդ խոսքով)

ԳՆԱՆՔ ԸՆԹՐԵԼ

(ՎԵՊ ՏՓՂԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ)

ԺԳ.

ԿԱՏԱՂԻ ՍԷՐ

Արեւը արդէն մայր էլ մտել , այդ ծառերի տակ մթութիւնը արդէն պատել էր եւ տիկին Հռիփսիմէն երբ Նիկոլի այդ յանկարծական հարցը լսելով դժգունեցաւ , աննկատելի էր : Սակայն պէտք էր պատասխանել և տիկինը ձեռքը երիտասարդի ձեռքից հանելով մէջքը տուաւ մի ծառի եւ ,

— Պարոն Նիկոլ . . . այդ խօսակցութիւն չէ , ասաց դողդոջուն ձայնով :

Իրաւ որ տիկնոջ սպասած խօսակցութիւնն այդ չէր (թէեւ կը ցանկար , որ այդ լինէր) : Նիկոլը երբ նորան կամուրջի վրայ հանդիպեց եւ խնդրեց նորան ընկերանալ , տիկինը կարծեց թէ խօսակցութիւնը Վարդուհւոյ վրայ կը լինի :

— Խօսակցութիւն չէ , Ժպտեց Նիկոլը — միթէ դուք չէ՞ք նկատել , որ երկու շարժութիւն ի վեր միշտ մի միջոց եւ միտուում ձեզ հետ առանձին գտնուելու :

— Գնանք , ասաց Հռիփսիմէն . եւ ցոյց տուաւ թէ ուղու՞մ է մեկնիլ , բայց երիտասարդը կտրեց նորա առջեւ եւ առանց այլեւայլութեան բռնեց նորա երկու ձեռքերը , մօտեցրեց իւր շրթունքներին , ապա մի սէր

արտայայտող անկարկ ձգեց նորա վրայ եւ դռչեց .

— Հռիփսիմէ . . . միթէ այդքան անդու՞թ ես , միթէ չե՞ս նկատել , որ երկու շարժութիւն ի վեր այլ եւս չեմ ապրում երբ քեզ չեմ տեսնում :

— Պարոն Նիկոլ , միմեջեց Հռիփսիմէն — ես . . .

— Օ՛հ , ոչինչ ունիք պատասխանելու , միջանկատեց երիտասարդը նորէն նորա երկու ձեռքերը համբուրելով — դուք ինձ սիրում էք , իսկ ես ձեզ պաշտում եմ , կ'ուզէ՞ք որ տեսնէք ինձ , հպարտ Նիկոլիս , ձեր առջեւ չողած , կ'ուզէ՞ք որ չողեմ , ասացէք եւ ես կը հնազանդիմ :

Հռիփսիմէի դէմքը ուրախութիւնից կարմրեցաւ :

— Խօսէ՛ք , խօսի՛ր , Հռիփսիմէ , հրամայի՛ր , եթէ փափագդ այդ է . . .

— Նիկոլ . . . թող ինձ , ես ամուսին ունիմ . . . ես չեմ կարող . . .

— Ամուսին , մի հաստագլուխ մա՞րդ , որը միայն անկողին մտելու է գալիս և որը միայն կերակրում է ձեզ իւր անկողնոյ համար . ա՛հ , տիկին , չեմ կարծում որ կարողանաս սիրել այդ փողի սիրահարին , այդ ծեւրունոյն , քանի որ մի երիտասարդ չողում է ձեր առջեւ եւ փռում է իւր սիրտը . . .

— Բաւական է . . . դռչեց Հռիփսիմէն . . . դնանք :

— Արեմն դուք ինձ չէ՞ք սիրում , ուրեմն սխալուե՞լ եմ ես :

Ասաց Նիկոլը , ուղղուեց , թողեց նորա ձեռքերը եւ կրունկի վրայ դառնալով ցոյց տուաւ որ մեկնում է :

— Նիկոլ , դռչեց Հռիփսիմէն , եւ զգալով որ այլ եւս անկարող է դիմանալ , ձեռքերը դէպի նորան տարածեց . երիտասարդը ընկաւ նորա մէջ , քաջեց նորան իւր կրծքի վրայ եւ մի համբոյր դրոշմեց դերասանուհւոյ շրթունքներին . Հռիփսիմէն զգալով համբոյրի ջերմութիւնը — դողաց եւ մոռացաւ իւր վրէժխնդրութիւնը , թողեց որ երիտասարդը գրկէ իրեն եւ այդպէս նստէ մի նստարանի վրայ , թողեց որ առնէ իրեն իւր ծնկները վրայ , սեղմէ նորա գլուխը իւր կրծքին :

Նա յաղթել էր , Նիկոլը իրն էր , բայց այդ ճի՞շտ էր :

Նիկոլը համբուրում էր այնպէ՛ս, ինչպէ՛ս իր համբուրեն օրական հաղարաւոր համբոյրներ ընդունող մի կնոջ. նա գրկում էր այնպէս ինչպէս գրկել էր Սովիային, իսկ Հռիփսիմէն, որը կատաղի կերպով թուղեց արծարծուիլ եւ յայանուիլ իւր սէրը — երբէք սառը դերասանուհին չէր . . . նա համբոյրի տեղ կծում էր երիտասարդի շըրթունքները :

— Իմա ես , չէ՞ , Նիկո՛ւ , բոլորովին իմա ես . . . մրմնջում էր նա :

— Այո՛ , իմ հրեշտակ , այո՛ , ո՛չ ոքի եմ . . . ես քեզ պաշտում եմ . . .

— Այլ եւս չեմ սիրում ոչ ոքի , այնպէս չէ՞ , հարցրեց Հռիփսիմէն հպարտութեամբ :

— Ոչ ոքի :

— Եւ նոյն իսկ Վարդուհւոյն , այնպէս չէ՞ :

— Վարդուհի՞ . . . գոչեց Նիկոլը աշխատելով զսղել իրեն — նա սիրուն աղջիկ է :

— Նիկո՛ւ , բացադանջեց տիկինը լջնելով նորա ծնկներին — Նիկո՛ւ , յիշո՛ւմ ես Վարդուհւոյն :

— Սիրուն աղջիկ է , կրկնեց Նիկոլը մի խորամանկ ժպիտով :

— Սիրո՞ւն . . . ա՛հ գարշելի է , գոչեց Հռիփսիմէն եւ դէմքը այնպէս ծւմեց որ ո՛չ մի նկարիչ չ'է կարող այդ դէմքով մի սատանայ նկարել եւ եթէ կարողանար , անշուշտ նորա անունը «կատաղի ատելութիւն» կը դնէր :

— Ես նորան ատում եմ . . . մոռնեց Հռիփսիմէն ատամները միմեանց սեղմելով :

— Ինչո՞ւ , ծիծաղեց Նիկոլը — նա գեղեցիկ է :

— Եւ դու սիրո՞ւմ ես նորան :

— Սիրե՞լ . . . քա՛հ քա՛հ ծիծաղեց բարձրաձայն Նիկոլը — ես չեմ սիրում նորան :

— Ես սարսափելի նախանձոտ եմ , Նիկո՛ւ , վրայ տուաւ տիկինը — ես ուզում եմ որ միայն ինձ սիրես , նախ կը ծծեմ նորա եւ սպա քո արիւնը :

Այս խօսքերը այնպիսի կատաղութեամբ արտասանեց , որ Նիկոլը սառսեց , նա սկսեց զղջալ , որ այդպէս շուտով ընկաւ այդ կնոջ ձանկը :

— Ես ո՛չ ոքի եմ սիրել , յարեց տիկինը դէմքը իսկոյն փոխելով մի ճարտար դերասանուհւոյ նման . . . ես քեզ սիրեցի , պաշ-

տեցի — եւ նա մօտեցաւ երիտասարդին , գրկեց նորան — այնքան եմ սիրո՞ւմ , որ պատրաստ եմ . . .

Եւ նա սկսեց կրծել , կծոտել երիտասարդի այտերը եւ շրթունքները :

— Պատրաստ եմ ուտել . . . խմել քո արիւնը :

Նիրքը կատաղի էր , սկսեց դողալ , ընկաւ ուժասպառ Նիկոլի բաղուկների վրայ եւ մրմնջեց .

— Նիկո՛ւ , ուզում եմ որ մեռնիս եւ ինձ հետ :

— Ա՛հ , գոչեց սալշած երիտասարդը :

— Այո՛ , ուզում եմ մեռցնել քեզ , որ չը յափշտակեն քեզ իմ ձեռքից , ուզում եմ մեռնիլ քեզ հետ , որ ուրիշի համար չը լինիմ . . . եւ նա աչքերը փակեց . . .

Այդ միջոցին հեռուից լուեցան կռուի կատաղի ձայներ , որոնց մէջ յայտնվում էր Գէորգի ձայնը . Հռիփսիմէն սթափուեցաւ եւ գոչեց շուարած Նիկոլին .

— Գնանք , Նիկո՛ւ , այնտեղ կուվում են , այս երեկոյ ինձ մօտ արի՛ . . .

ԺԳ.

ԳԵՈՐԳԸ ՆՈՐԷՆ ԲԱՐԿԱՅԵԼ Է

Գէորգը նորէն բարկացել էր :

Այդ դերասանը շատ դժբաղդալիւ էր , մի ամենաչնչին բան բարկացնում էր նորան եւ կատաղութեան աստիճանին հասցնում . իսկ վա՛յ նորան , ով որ նորա կատաղութեան պատճառը չը գտնար . նա կը զարնէր , կը հայհոյէր փողոցային հայհոյանքներով , եթէ իւր գիմացը նոյն իսկ բարձրաստիճան անձ մը լինէր :

Բայց ինչո՞ւ էր բարկացել :

Հռիփսիմէն եւ Նիկոլայի հեռանալուց յետոյ , այդիկ դռնից ներս մտաւ մի ուրիշ երիտասարդ , որը նմանում էր մի կնոջ այցելութեան գնացողի , այնքան մաքուր հաշնուած էր , նուրբ ձեռքերով , իւղած մազերով , խնամքով սանտրուած նրբաթել մօրուսով , բայց կարճահասակ , փոքրիկ ժիզվիտական աչքերով եւ խորամանկ քայլերով :

— Ա՛հ , Տէր - Դաւթեանն , գոչեց Բաղ-

—Հա՛, տո՛, ասաց Գէորգը —Ի՞նչ գործ ունի այստեղ:

Տէր - Դաւթեանը մօտեցաւ եւ բարեւեց, Գէորգը պաղութեամբ ընդունեց նորա բարեւը, իսկ Բագրատը մի խորամանկ ժպիտով:

—Ներկայացո՞ւմ ունիք, հարցրեց Տէր - Դաւթեանը Գէորգին:

—Այո՛, վաղը երեկոյան:

—Ի՞նչպէս է, տոմսակ ծախուե՞լ է:

—Բոլորը, ստեց Գէորգը:

—Աստուած տայ, եղբայր, չ'ուզողի աչքը քոռանայ:

—Ուրեմն աչքդ քոռանայ, ասաց ինքն իրեն Գէորգը:

—Բայց, շարունակեց Տէր - Դաւթեանը — ակնը վա՛տ պիտե՛ս էք ընարեւ:

—Ինչո՞ւ:

—Ախր այս տեղի բեմը փոքր է, անյարմար է...

—Դուք ձեր գործին խառնուէք, դիտեց պաղութեամբ Գէորգը:

—Իրաւունք ունիք, Պարո՛ն Գէորգ — բայց ես էլ եմ դերասան եւ չեմ ուզում ակնը որ ձեր անունը կոտրուի, որ ասեն թէ հայ դերասանաց խումբը...

—Տո՛, ինչե՛ր ես դուրս տալիս, գոչեց Գէորգը զսպելով իւր բարկութիւնը — Ի՞նչ գիտես որ լաւ չենք խաղալու, կամ եթէ մեր անունը կոտրուի, քե՞ղ ինչ, դու հօմեր խմբիցը չես, դու միշտ գնա եւ քո «Նոր Բնակարանը» ներկայացո՛ւր:

—Ե՛՛, Պ. Գէորգ, չա՛տ շատ էք բարկանում, ասաց Տէր - Դաւթեանը համազօղ ձայնով:

—Բարկացնում ես, ի՞նչ անեմ, գալիս ես միշտ վատ խօսելու:

—Աստուած ո՛չ անի, բայց ես ուզում էի ասել, որ լսեցի, իբր թէ Սունդուկեանը...

—Սունդուկեանը ի՞նչ, միջահատեց նորան Գէորգը, մտածելով որ այդ դերասանը գործի մէջ մատ է խառնել:

—Իբր թէ դժգոհ է, որ իւր թատեր-գութիւնն էք խաղում եւ...

—Ե՛ւ:

—Եւ կարծեմ ուզում է արգիլել:

—Ի հարկէ՛ կ'ուրախանաս, հարցրեց Գէորգը բարկութեամբ:

—Աստուած իմ, ինչո՞ւ, միթէ ես ձեր վա՛տն եմ կամենում, Աստուած ո՛չ անի:

—Դիտե՛ս ինչ կայ, Տէր - Դաւթեան, ասաց Գէորգը — պարզ խօսի՛նք, կարծեմ քո մատդ խառն է դուրս մէջ:

Տէր - Դաւթեանը գունաթափուեց, զգաց որ որ բանը վատ է՝ գնում եւ այս անգամ իւր խարդախութիւնը բռնովում է:

—Տէր Աստուած, գոչեց նա — Ի՞նչ էք ասում, պարոն Գէորգ, ի՞նչ էք ասում:

—Ասում եմ որ դուցէ՛ դու ես գնացել Սունդուկեանի մօտ եւ...

—Աստուած ի՛մ, միջահատեց Տէր - Դաւթեանը — զրպարտում էք, Պ. Գէորգ, ես միայն մի քանի խօսք...

Բայց զգալով, որ անզգայօրէն մատնում էր իրեն, խօսքը կտրեց:

—Ի՞նչ, բացագանչեց Գէորգը կատաղի ձայնով — ուրեմն դու գնացե՞լ ես Սունդուկեանի մօտ եւ խօսե՞լ ես մեր խաղալու մասին:

—Այսինքն, կակազեց Տէր - Դաւթեանը — Սունդուկեանը դանդաղեց, իսկ ես երաշխաւորեցի որ լաւ կը խաղաք, սակայն չը կարողացայ ուրանալ, որ բեմը փոքր է եւ տէ՛խօր չը կայ:

Գէորգը կատաղաբար ցատկեց տեղից եւ բռնեց նորա ուսի գլխից:

—Ի՞նչ, դու ասացիր որ բեմը փոքր է եւ...

—Բայց նա գիտէր արդէն, ասաց խեղճ Տէր - Դաւթեանը վախից դողալով:

—Դու էլ հաստատեցի՞ր, բացագանչեց Գէորգը որոտաղին — եւ գալիս ես մեզ վրայ ծիծաղելո՞ւ, հա՞:

—Բայց, Աստուած ի՛մ, չէի կարող սուտ ասել:

—Ձե՛ր կարող, ինչո՞ւ կարողանում ես, երբ պէտք է աղջիկ հրապուրել, բռնաբարել նորան եւ հրապարակի վրայ ձգել... Ինչո՞ւ կարողանում ես երբ պէտք է մուրացկանի նման աղաչել, անօթի եմ գոչել եւ տոմսակներ տալ...

—Բայց, Գէորգ, զրպարտում ես, ես...

—Զրպարտո՞ւմ եմ, չէ՞ որ ինձ պատմեցին, որ մէկի ոտն անգամ համբուրել ես:

—Սուտ է, Գէորգ, մի հաւատալ, թըշնամի խօսք է:

Ասում էր Տէր - Դաւթեանը վախից

դժգուհած եւ դողալով. նա գիտէր, որ եթէ Գէորգը մի անգամ զարնէր, կը մեռցնէր իրեն:

Այդ ձայներն էին, որ հասան Նիկոլի եւ Հռիփսիմէի ականջին. Նիկոլը մտածելով եւ շուարած հետեւեց տիկնոջ եւ նոքա մօտեցան խմբին:

— Այդ ի՞նչ է, գոչեց Հռիփսիմէն մշտնելով կուռուղներէի մէջ — ամօթ չէ՞:

— Ձեռ խմանում, տիկին, գոչեց Գէորգը կատաղութիւնից դողացող ձայնով — այս վատազգին, այս սրիկան, այս . . . ն գնացել է Սոււդուկեանի մօտ եւ ասել որ մեր բեմը փոքր է եւ, իսկ Սոււդուկեանը միտ ունի արգիլել մեզ . . .

— Սուտ է, տիկին, մի՛ հաւատար, մէջ մտաւ Տէր - Դաւթեանը — այդ բաները Սոււդուկեանը արդէն ինքը գիտէ:

— Դու էլ կրկնապատկեցիր, գոչեց Գէորգը եւ այնպիսի մի ուժգին ապտակ իջեցրեց նորա երեսին, որ խեղճ Տէր - Դաւթեանը կը ընկնէր, եթէ Բագրատը չը բռնէր նորան:

— Ապտակ, աստու՞կ . . . գոչեց Տէր - Դաւթեանը կատաղութեամբ եւ վախով:

Նա չէր ամաչում, որովհետեւ պատկանում էր այն մարդկանց դասին, որոց բռնաւորութեան մասին ժողովրդական առածը կնքել է այսպէս խօսքերով.

« Թքես երեսին, կ'ասէ փառք Աստուծոյ անձրեւ եկաւ »:

Հռիփսիմէն վազեց նոցա մէջ մտնելու, բայց Գէորգը ետ հրեց նորան, բռնեց Տէր - Դաւթեանի ուսի գլխից, մի երկրորդ ապտակ իջեցրեց նորա ծոծրակին եւ ուժգնութեամբ հրելով նորան գոչեց.

— Կորի՛ր դնա . . .

— Թող երթայ « Նրկու ապտակ » թատերգութիւնը խաղայ, ժպտեց Բագրատը:

Տէր - Դաւթեանը այդ ուժգին հրելուց երեսի վրայ կը փռուէր գետին, եթէ ձեռքը տարածելով մի ծառի բունից չը բռնէր, սակայն ոտը դարձաւ եւ սրունդը սաստիկ ցաւեց, ծոծրակն էլ ապտակն էր այրում:

Եւ կաղն ի կաղ փախաւ մրմնալով.

— Ես ինքս ինձ թակարդի մէջ ձգեցի:

— Գնա՛, գոչում էր նորա ետեւից Գէ-

որգը — սրիկայ, անառականոց պահող լիրբ, մասնի՛չ, փողոցային տիղմ . . .

Միւսները աշխատեցին Գէորգի բարկութիւնը մեղմել եւ հետաթեամբ այդ յաջողութեան:

— Ես գնում եմ, ասաց Նիկոլը բոլորովին մտադրաւ:

— Նրկու ժամից յետոյ ինձ մօտ կը սպասեմ, չնչեց նորա ականջին Հռիփսիմէն: Նրկոտասարգը առանց իսկ նորա երեսին նայելու համարեա թէ փախաւ եւ երբ այգիից դուրս եկաւ, մրմնաց.

— Օ՛հ . . . առիւծի ձանկն եմ ընկել, սարսափե՛լի կին . . . իսկ ես մտածում էի դորանով Վարդուհայն գրաւել . . .

ԺԵ.

ՆԻԿՈԼԻ ԱՐՀԵՍՏԸ

Նրկու ժամից պէտք է Հռիփսիմէի մօտ գնար եւ այդ միտքը նորան սարսափեցնելու պատրաստ էր:

— Ի՛հ, ուները շարժելով մտածեց Նիկոլը, երբ մտաւ Աղէքսանդրեան այգիի մէջ - ի՞նչ կայ, պէտք է համբուրի եւ շատ շատ մի ժամ չարչարէ ինձ . . . դուարձալի է չարչարուիլ մի կնոջ գրկում եւ կնոջ ձեռքով, իսկ յետոյ . . . ա՛հ, այդ « յետոյ » ն լաւ չէ . . . կատաղի սէրը կատաղի նախանձ կը զարթեցնէ եւ ես ստիպուած կը լինիմ միշտ բծնել նորա շուրջը . . . բայց ինչո՞ւ, ինչի՞ց եմ վախենում . . . ի՞նչ կարող է անել, եթէ մի քանի չաքաթ իւր հետ զուարճանալուց յետոյ թողնեմ նորան:

Եւ Նիկոլը ժպտեց յիշելով իւր արհեստը թէ ինչպէս մի սիրուհու թեւը մտած երբ հան իպում էր մի ուրիշ սիրուհիի, իսկոյն հեռանում էր եւ թողնում որ երկու. կանայք միմեանց հետ կուռէին:

— Լա՛ւ, նորէն սկսեց մտածել Նիկոլը — ասե՛նք մուտ դասայ Հռիփսիմէի մօտ, յետոյ, ի՞նչպէս կարող եմ մօտենալ Վարդուհային, չէ՞ որ այդ կատաղի կինը ամէն արդէնքներ կը դնէ սաջեւ . . . զգուշելի է, ճշմարիտ . . . ո՞վ գիտէ քանի հարիւր համբոյններ դրօշմուած են այդ կնոջ այտերի վրայ . . . իսկ որքա՛ն հաճելի է համբուրել

մի անարատ դէմք . . . ուրեմն . . .

Մի րոպէ կանգ առաւ «Պօպով»ի թէյի մթերանոցի մօտ, մտածեց եւ ապա մէկէն ի մէկ զուարթ դէմք ստանալով մրմռաց .

— Մինչեւ երկու ժամ ամէն բան կը վերջացնեմ :

Արագ քայլերով կտրեց փողոցը եւ մտաւ «Կանիւշնայեա», կանգ առաւ թիւ 21ի առաջ, բայց ներս մտնելու միջոցին վարանեցաւ :

— Ո՛ր եմ գնում ես, ի՞նչպէս գտնեմ նորան, խօսեց նա ինքն իրեն :

Եւ նա դրան մօտ կանգ առնելով ներս նայեց :

Բակը ամայի էր, սակայն Նիկօլի աչքից չը վրիպեցաւ թէ ինչպէս մի աղջկայ սիրուն գլուխ երեւում էր դիմացի լուսամուտից . նորա սիրտը սկսեց տրօփել իւր սիրունակ գլխի ստուերը տեսնող սիրահարի նման, կոթնեցաւ դրան եւ աւելի ուշադրութեամբ նայեց, բայց մութը կոխում էր :

— Արդեօք նա՞ է . մտածեց Նիկօլը — նոցա տունն էլ չեմ ճանաչում :

Աղջիկը դարձաւ, Նիկօլը մի երկու քայլ առաջ եկաւ եւ երկուսն էլ ճանաչեցին միմեանց . խօսյն աղջկայ գլուխը անհետացաւ եւ խորամանկութեան մի ժպտեց խաղաց Նիկօլի դէմքի վրայ :

Շուտով երեւեցաւ Վարդուհին, մաղերը արձակ թողած ուսերի վրայ եւ տնային պարզ հագուստով . սքանչելի՛ էր եւ Նիկօլը մագնիսացածի նման դէպի նա դընայ բարեբաղդաբար . բակի մէջ ո՛չ ոք կար . եթէ լինէր իսկ, ո՛չ ոք կը զարմանար որ մի օրիորդ խօսում է կա՛մ իւր ազգական եւ կա՛մ մի ծանօթ երիտասարդի հետ :

— Նիկօ՛լ . . . գոչեց Վարդուհին պարզելով նորան իւր ձեռքը :

— Ես եմ, Վարդուհի, ասաց երիտասարդը սեղմելով ձեռքը :

— Անխոհեմութիւն է, Նիկօ՛լ, ինչո՞ւ եկար :

— Քեզ տեսնել էի ուզում, չը կարողացայ դիմանալ, երկու օր է որ չեմ ապրում այլ եւս :

Այս խօսքերը մի այնպիսի սրտաշարժ ձայնով ասաց, որ միամիտ աղջիկը քիչ մը նայ արտասուէր :

— Խեղճ Նիկօլը, ասաց նա — ի՞նչ անենք այժմ, մայրս տանն է :

— Գնանք պտտելու :

— Պտտելո՞ւ, բայց որ մեզ տեսնե՞ն :

— Ո՞վ է ճանաչում մեզ, կ'գնանք Աղէք . սանդրեան այգին եւ մի առանձին կողմ քաշուելով կը խօսինք . գնա հագուելի՛ր :

— Բայց այդ շուտ չի լինիլ, իմ հագնուելուս համար մէկ ժամ պէտք է :

— Աւելորդ է զարդարուիլ, այժմ մութն է . միայն գլխարկդ դիր եւ չըջաղդեստ հագիր, մենք ամայի փողոցներով կ'երթանք :

Վարդուհին պատրաստուեցաւ տունն մտնելու, բայց յանկարծ կանգ առաւ եւ,

— Մօրս ի՞նչ ասեմ, հարցրեց նա դողդոջուն ձայնով :

— Այժմ ի՞նչ ասացիր որ դուրս եկար :

— Առաջի որ մի ծանօթ աղջիկ անցաւ դրան մօտից :

— Ուրեմն . . . ասա, որ այդ ծանօթ աղջիկը քեզ պտտելու հրաւիրեց :

— Ա՛հ, այո՛, ուրեմն բակից հեռացիր :

— Դրսումը կը սպասեմ քեզ, ասաց Նիկօլը եւ դուրս գալով, կանգ առաւ դրան աջ կողմ, պատի տակը : Իսկ Վարդուհին թեթեւօրէն ներս մտաւ, գլխարկը դրեց եւ ի մեծ զարմացումն Օլիւկային, իւր շուրջադրեան էլ հագաւ :

— Այդ ո՞ր, Վարդուհի, հարցրեց զարմացած տիկինը :

— Ման գալու :

— Ո՞րտեղ :

— Այն աղջիկը ինձ հրաւիրեց Աղէք . սանդրեան այգին պտտելու գնալ :

Օլիւկան ուսերը շարժեց եւ պատասխան չը տուաւ, միայն մրմռաց քիչ տակիցը .

— Այժմեան աղջիկները աղամարդիկներին էլ անցկացան :

Վարդուհին վար իջաւ եւ մի րոպէից յետոյ Նիկօլայի թեւը մտած, իջնում էին ցած, Փոխարքայի տան կողքից :

— Ինչո՞ւ այս կողմից, հարցրեց Վարդուհին :

— Ահեղի ամայի է, ասաց Նիկօլը եւ ձախ ձեռքով սեղմեց իւր թեւի տակը մտքած Վարդուհիի ձեռքը . խեղճ աղջիկը դողաց, բայց թոյլ տուաւ, որ Նիկօլը իւր չորս կողմը նայելուց յետոյ կռանար եւ չրթերովը հսկեր իւր ձախատին . . .

Շառաղնեցաւ եւ մրմնջեց .

—Նիկօլ, կը տեսնեն . . .

—Ո՛չ որ կայ փողոցումը, եւ նա թողեց թեւը, չըջապատեց ձեռքով նորա մէջքը, բա-
ւեց իւր կրծքի վրայ եւ համբուրեց նորան :

—Սիրո՞ւմ ես ինձ, Վարդուհի :

—Միշտ քեզ վրայ էի մտածում, ասաց Վարդուհին մեղմ ձայնով :

—Իսկ ես միշտ մտքովս չողել էի քո սքանչելի դէմքիդ առաջ եւ իմ կեանքս զո-
հել էի խոստանում մի համարյոյրիդ համար... Օ՛հ, ասա՛, Վարդուհի, ի՞նչ ես ուզում որ զոհեմ քեզ, դու ինձ երջանկացնում ես, ասա, ուզո՞ւմ ես որ իմ ամբողջ հարստու-
թիւնս զոհեմ ոտքերիդ տակ :

—Ուրեմն դու հարո՞ւստ ես :

—Օ՛հ, քեզ թաղուհւոյ նման զարդա-
րելու չափ հարուստ, կ'ուզե՞ս որ քսան հազար բուրլին — ամբողջ կարողութիւնս տամ ամէնը մի ազամանդի, որը նուազ լոյս կ'ունենայ քո աչքերիցը, կ'ուզե՞ս . . .

Մեծախօսութիւններ, որոնք կրքի ար-
տայայտութիւններ էին . . .

—Վ'ուզէի քո կինդ լինել . . . մրմնջեց Վարդուհին եւ կրթնեցաւ նորան :

Նիկօլը դողալ ուզեց, բայց նկատեց որ Վարդուհին իր կրծքին էր կրթնել . . .

—Իմ կի՞նս, գոչեց երիտասարդը — օ՛հ, միթէ այդքան երջանկութան յոյս տածել կարող եմ, միթէ կարող եմ այդպէս մտա-
ծել :

—Ինչո՞ւ չէ, Նիկօլ, հայրս փողասէր է եւ եթէ հարստութեանդ անունը տաս նորա մօտ, նա ուրախութեամբ ինձ քեզ կը տայ :

Նիկօլը մտածել սկսեց, իսկ Վարդուհին նորէն նորա թեւը առաւ :

Վար իջնել սկսեցին, բայց փոխանակ Աղէքսանդրեան այգիի կողմը դնալու, Նի-
կօլը ծռուեցաւ դէպի Ղվօրցօվայա փողոց, անցնելով այն փոքրիկ ծառուղիի միջով, որը փութում է Փոխարքայի տան առջեւ . բաղնիսթիւնը այնտեղ չատ էր եւ Վար-
դուհին, որքան եւ կամեցաւ, սակայն չկա-
րողացաւ հարցնել թէ երիտասարդը ի-
րեն ո՞ւր է տանում :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՅ

(Շարունակ է)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԵՐԳ ՀՈՎՈՒՒՆ

Վերջապալու հուսկ շողեր
Ներկեն զօսի բլրակներ,
Ստուերին հետ մրցի լոյս,
Ծնին աստեղը գեղայոյս :

Իբրեւ կոնթեղ մ'արծաթեայ
Ի հորիզոն ցլանայ
Լուսինն՝ դր բոցը տփուռնեալ
Հանգչին ի մարգս ցողափայլ :

Լերանն ի կող գլխիկոր,
Քաղցր է հովուին վշտակոր
Նետել ակնարկ մը երազուն
Բնութեան վերայ գեղատուն :

Անդ Ովկէան հանդարտիկ
Մըղէ յափունս մեղմ ալիք,
Եւ կատարի զիւր կըքեր
Վանէ հեռուն տարուբեր :

Փափկիկ մանկան հեղանինջ
Իբրեւ հաւաչ մեղմ ու ջինջ,
Մընչէ կոհակ թափանցիկ
Յարս լերան բարձրաձիգ :

Յանհուն ծոցին կապուտակ,
Թողլով ի ծռափ զիւր նաւակ,
Ձկնորն երգէ արամբէն
Խոնջեալ օրուն մատտակէն :

Լուռ է բնութիւնն եւ անդորր,
Թռչնոց դայլայլք հեռաւոր
Լսուին միայն եւ հողմին
Տերեւոց մէջ անտառին :

Խորհրդաւոր շըշնկոց
Ջերթ դիւթական ոգեաց կոծ,
Գան վրդովել այն պահուն
Հողոյ երազն զմայլուն :

Սակայն հօտը իմ քոյլ առ քոյլ
Դիմեն յարօտ մարգափայլ,
Ժամ է գիւղակ դառնալոյ,
Ժամ հանգստեան ու քնոյ :

Ջերթ բուրվառաց անոյշ խունկ
Բուրեն ի փիւռ թարմ ծաղկունք,
Թափառական զեփուռին
Համբուրից տակ ջերմագին :

Մատաղ հովիւք հոյլ ի հոյլ,
Նոր Ապրիլն սերագոյր,
Սըրինգն ազու հնչեցնեն
Ու ծաղկեփունջս յօրինեն :

Այլ հետեւիմ տխրագին
Ես ոչխարացս երամին,

Ինչո՞ւ ծաղկունս հաւարեմ,
Զիմ որայս ո՞ւմ նուիրեմ:

Փոքրիկ խրճիթն է խոպան
Դռնակն ալ գոց յաւիտեան .
Իբր յիշատակ տի մը հող,
Պարզի աչացս մթաքօղ:

Աւա՛ղ, ի կեանս ամէն բան
Դոյն երազ մ'է ցնորական,
Որ իբրեւ մեզ ապրիկի
Հոգմոյն ի շունչ փարատի:

Ե. Զ.

Կ Ե Ա Ն Ք

Ինձ ամեն բան բարի թուէր եւ իրաւ,
Նըշոյներով եւ ականախտիլ ծիրանեաւ .
Երբ շուրջ պատած էր իմ երկին անապակ .
Վ ըստահութեամբ հայէի ես շուրջ զինեւ,
Զի հրեշտակներ կային գլխոյն իմ վերեւ,
Հեզ եւ ժպտուն, լուսապսակ:

Նշւիրական բան մը խօսէր իմ հոգւոյն
Քան զոր ոչ ինչ էր երջանիկ, հեշտագոյն,
Քան զոր ոչ ինչ ժպտէր աստեղց մեղմալոյս:
Մանուկ տըգէտ, արդիտութիւն երկնային,
Զըւարթ էի եւ զինեւ շուրջ դառնային
Զեռն ի ձեռքն սէր եւ յոյս:

Զարիք չը կար գըրէթէ բնաւ յաշխարհի,
Այնչափ ամէնքն էին ազնիւ եւ բարի,
Աստղէն սկըսեալ մինչեւ թըռչնիկն որ երգէր,
Համբոյր յըղէր ծաղիկն արիւնոյն ոյր գորով,
Ճաճանչ դարձած, գըգուէր ծաղիկըն սիրով .
Եւ լընուին իմ աչքեր:

Եւ լըսէի հեռուստ սիրոյ բիւր աւաչ:
Հո՞ղմը շընչէր . բընութեան էր այն հառաչ
Զոր անմահին վառէր անձուկ անըսպառ .
Ծո՞վ շառաչէր . պատմէր զտարւիանս իւր
Երկնի,
Ոյր հեզ կապոյտ խանդիւ ի ծոց իւր խառնի,
Եւ համբոյրըս տան յիրեար:

Նըման էի մարդաբէի մի մատաղ
Զոյր ներշնչէ երկին գհոդի կարի վաղ
Եւ ոյր համար գաղտ խորհուրդներ մեր-
կանան .
Տամուկ էր անձըն իմ ցընծութեան սուրբ
Հաղով,
Եւ մըթնորդտ իմ կուտակէր իբր ըզծով
Հրեշտակներով աննըման:

Կաթիլ ցօղոյ մարդարատիպ ուր շողար
Մի մոլորեալ ճաճանչ արիւնոյն վառ ի վառ,
Անձրեւաթաց հողմատատան մի տերեւ,
Ամալ վարդածղի թափառայած լուսածայր,
Որ գոգցես իմն յոչ կամաց հեռանայր
Ի մեր երկնից, արփաթեւ:

Երերածուփ ալեակն ուստի արձակուէր
Հըծծիւն նըւաղ, զերդ մի մըրմունջ սիրա-
նուէր,
Արտասուածութեամբ ջըրհորոյն ճիչն եւ կական,
Խոնարհ հիւզակն ուր դառնային երեկոյն
Յամբաքայլ կովք յոյց բոժոժին զօղանջիւն
Խառնէր բառաչ բացական:

Այս ամենայն ունէր լեզու մ' իմ համար .
Այս ամենուն մէջ կային ձայնք անհամար
Որ պատմէին անլուր բաներ իմ հոգւոյն .
Նըման մարդոյ զոր խրախճանաց պատէ ամալ,
Որ պարարի երգովք, զինեաւ հեշտութեամբ,
Եի խընդիւ պատարուն:

Նըմին նըման եւ ես էի արբեցած .
Լոյս եւ փունջեր խըռնէին յիս սիրարծարծ,
Եւ, խեղաքիւղ, գոչէի . «Կեանքն է բարի»:
Բայց երբ խաւար դըժնետեսիլ երեւցաւ,
Զերդ ուրուական ոյր զարդերն են հոգք
Եւ ցաւ
Որ տան արցունք աշխարհի:

Քերովբէներ երբ տեղի տուին սատանին
Ոյր դաժան թեւք գըլխոյս վերեւ տատանին
Զօրէն թեւոց գիշերասէր չըղջըկան .
Երբ տեսայ ցուրտ քիրտըն մահու որ թանար
Զարին ճակատն եւ արդարոյն հաւասար,
Եւ թէ լուռ էր գերեզման:

Երբ ունիլըն դրի հողմահալած ձայներուն
Որ, ողբագին, թըռնէին 'գ օդս երերուն
Եւ պատմէին նորօրինակ մարմոքներ .
Երբ տեսայ ժանտըն երջանիկ յաշխարհի,
Որ զարտասուս հիւքին արդար եւ բարի
Նախատելով՝ ծիծաղէր:

Բամովին երբ անցան աչացս առաջի
Խումբք եղիւեաց ոյց սուգն ի մէնջ ստէպ
Թաքչի,
Որ երթային բոկոտըն մէջ փուշերու .
Երբ անմեղին տեսայ տանջանքն ու զըղ-
ուանք,
Զոյր ճաղկելով ըզբօսնուր ժանտն անառակ
Պատիւն ու ժպիտ սիրարկու:

Ա՛հ, յայնժամ սիրտ խո՛, ապրատամբ,
դառնացաւ,
Զի չէր կարող այն ըմբռնել այսչափ ցաւ,
Երբ այնչափ մեծ՝ վրասմ էին տիեզերք.
Եւ մոռանալ փափաքեցայ զամէն շնորհ
Զոր լընուին այնչափ աղէտք նորանոր,
Բեհեզին տակ թաքուն վէրք:

Զարմացած էր հոգիս ի տես Անհունին
Որ հանդուրժէր այդ դառնութեանց ան-
հնարին:

Յաւէտ բարի կամէի ես, չար՝ նըւաղ.
Բւ, աղքատէս յանհամար ջահս երկնային,
Դըժգոհ էի, եւ չըրթունք իմ ասէին:

«Աւա՛ղ, այս կեանքն է երազ»:
Յ. ՍԵԹԵԱՆ

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Ա.

Զարգասենեկի թղթերը. — Մագի պահպանու-
թիւնն. — Օրբոց — կառքերը. — Մեքը:

Պատմական ժամանակներէ ի վեր մարդ
միշտ ջանացած է իւր արտաքին գեղն ու
փայլն աւելցնել արուեստական միջոցներով,
և առանց ելնելու մինչեւ Աստուածաշունչն,
Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Կարելի է հաս-
տատել թէ ամեն ժամանակ փորձեր եղած
են «տարիներու անդամանելի աւերումնե-
րը պարտկելու»:

Ըստ Հովնի, Իմաստութեան դիցուհին
եւ նոյն իսկ Սիրոյ մայրն «Գեղն» կը գոր-
ծածէին, ճիշդ մեր արդի տիկնանց նման:

Եւ միթէ չը՞ կարծուիր որ Ուլիդիոս այս
վերջնոց կ'ուզէ իւր խօսքերն Սէբեւ-Սե-
պիւսին հետեւեալ կառնին մէջ. «Ապիտա-
կադեղէն կ'առնուր իւր խաբեպատիր ձեր-
մակութիւնն, արուեստական ուրիշ միջոց-
ներ կը փոխանորդեն արեան գոյնին, դուք
գիտէք երկնցնել եւ կարճել ձեր յօնքերն եւ
«Գեղն» մը ներքեւ պահել ձեր ճշմարիտ
այտերը, չէք շառագնիր ոգեւորելով ձեր
աչաց փայլը նուրբ փոշիներով եւ քրքումով,

որ կ'աճի յանապակ ափուռնս անդ Պիւտ-
նոսի»:

Յորնաղ, իւր սուր գրչին բոլոր խտու-
թեամբ, կը նկարագրէ մեզ «Ներկեալ ե-
րեսներն զոր կը ծածկեն այնքան դեղեր և
ուր կը փակչափն տարաբաղդ ամուսնոց չըր-
թունքները»:

Պղաւտոս, իւր մէկ կատաղերգութեան
մէջ, կը ներկայացնէ տիկնոջ մը արդուզար-
դը:

— Ինձ սպիտակ տո՛ւր, կ'ըսէ նա իւր
նաժշտին:

— Ի՞նչ պիտի ընես:

— Այտերուս պիտի քսեմ:

— Ինչո՞ւ համար թանաք չես խնդրեր
փղոսկրը ճերմկեցնելու համար:

— Ե՛հ, լաւ, կարմիր տուր ինձ:

— Բնա՛ւ: Սիրուն ես դու: Այդ ներ-
կով պիտի եղծանես սքանչելի գործ մը:

— Եթէ հոտերս տայի՛ր:

— Մի՛ գործածեր զանոնք: Հոտ մը
չբուրող կին մը միշտ լաւ կը բուրէ:

Վերջապէս, Պրոպերտիոս, այս լրբենի
մուսայն նկարագրած է անկման դարուց
Հռովմայեցւոց դիւային զազրութիւնները,
իրաւամբ կ'ըսէր իւր ժամանակի կանանց.
«Ամենէն բարեյարմար դէմքն է այն զոր
բնութիւնը կուտայ»:

Այսու հանգերձ, միթէ բացարձակապէս
կ'արդիւնէնք «Գեղն»ները: Ո՛չ: Քողմէթիք-
ներու գործածութիւնն, ոյր նպատակն է
վերանորոգել մորթին շնչառական խանդար-
եալ ծակտիկներն, ոչ միայն ներքի է, այլ
եւ կը յանձնարարուի առողջարանութեան:
Արդարեւ, եթէ հարկ է դատապարտել ըստ
արժանւոյն այն բաղադրութիւններն որք խա-
բեայներու գործեր են, օգտակար է բուժա-
նել գոյնին թարմութիւնը, մորթին նրբու-
թիւնը, ճապուկութիւնը, պահպանել ձեղքը-
տուքներու մաշկն, անհետացնել քերուածքն,
քրտինքի հոտերն, ի մի բառ, պահել սմ-
բող մարմինն մաքրութեան վիճակի մը
մէջ, որով մորթը կարենայ կատարել իւր
պաշտօնն: Եւ յետոյ, հարկ է նաեւ խոս-
տովանիլ թէ զարդարանաց արուեստը ճա-
շակի արտայայտութիւն մ'է կնոջ քով. եւ
այնչափ առաջ տանելու չէ խտութիւնն
մինչեւ դսրովել այն առողջ միջոցներն որք,
միանալով բնականին, կրնն կ'ընեն աւելի

նակամուրջ մը , որ շատ դադաթներ , սառ-
ցալեռներ , թարմ արօտատեղիներ ու սրըն-
թաց լեռնահոսանքներ ունի : Քասաբէքի ,
5000 մեթր բարձրութիւն ունեցող լեռան
մը քովէն տաքին կ'անցնի Վլատիկովկասի
անցքն , որ երկու աշխարհներն կը միացնէ
հոս : Քասաբէքէն դեռ աւելի բարձր , մինչև
7000 մեթր վեր կը ցցուի Էլբրուսն : Կով-
կասն երկրի ամենաբարձր լեռը կը նկա-
տէին հիներն եւ աւելի բարձր մը իրօք չէ-
ին ճանչեր անոնք : — Կովկասի Արեւել-
եան հարաւային ծայրն Կասպից աղտաղ-
տուն ծովը կը շօշալիէ , որ անդին հիւսի-
սակովքի սահմանը կը կազմէ : Թէպէտ մեծ
հոսանքներ կ'ընդունի , յայտնի դուրս թափ-
ուելու տեղ մը չ'ունի երբէք , բայց ուժգին
շողիացումը աւելի կը քիչցնէ քան կը շառ-
ցընէ զինք : Հիւսիսային ափէն Կասպից
ծովն կը թափի Ուրալն , որմէ անդին վեր
կ'երնէ սահմանը , մինչեւ որ ահագին , 500
մղոն երկայն Ուրալ լեռն օրոշաբար Եւրո-
պիոյ եւ Ասիոյ մէկ կը ներկայի , ու Նովայա
Ձէմայի դէմ ծովը կ'իջնէ : Արեւելակողմէն
աւելի ու լերկ , արեւմտակողմէն մեղմ դա-
ռիվար , հարաւէն խիտ անտառուտ , դուցէ
եւ ոչ մի տեղը 1600 մեթրէն շատ բարձր
է Ուրալն , բայց զարմանալի մետաղային
հարստութիւն ունի , մասնաւորաբար ամե-
նալաւ երկաթահանք : Ուրալ գետն ու Ու-
րալ լեռն երկրաբաժնի արեւմտեան սահ-
մանը կը կազմեն : Միւս կողմերէն հիւսի-
սային , հնդկային ու մեծ երեք ովկիաններն
կ'ողողեն Ասիան :

Ասիան այն միակ աշխարհաբաժինն է ,
որ միւս չորսի ամեն մէկի հետ (Եւրոպիոյ
հետ ցամաքով միանալն բոլորովին բացառե-
լով) նեղուցով կամ պարանոցով կամ կղզե-
պատկով կը կապուի : Հիւսիսագոյն կէտն
է Ձէյուսքին գլուխն , հիւսիսային լայնու-
թեան 78⁰ . հարաւագոյն կէտն , Բուրու
գլուխն , հիւսիսային լայնութեան 14⁰ : Ու-
րեմն գրեթէ լայնութեան 77 աստիճանի
մէջ կը տարածուի Ասիան : Արեւելագոյն
կէտն է Արեւելեան գլուխն , արեւմտեան
երկայնութեան 132⁰ . կամ արեւելեան եր-
կայնութեան 208⁰ , արեւմտագոյն կէտն
Բաբա գլուխն , արեւելեան երկայնու-
թեան 43⁰ : Ուրեմն գրեթէ երկայնու-

թեան 164 էն աւելի աստիճաններու մէջ կը
տարածուի Ասիան :

Ձեւակաղմութեան ու շրջագծին դալով ,
ամեն տեղ այնպիսի մեծ միակտուր երկրա-
զանգուած մը կը կազմէ Ասիան , որին երկրի
վրայ ուրիշ եւ ոչ մի տեղ նորէն կը հանդի-
պի մարդս — ճիշդ ասոր համար ալ Ափրի-
կէէն ու Աւստրալիայէն յետոյ ամենաբիշ
եղերային զարգացումն ունի Ասիան : Թե-
րակղզեային մասերն այնպէս կը համե-
մատին գլխաւոր մարմնոյ հետ ինչպէս 1ը
Ֆի հետ : Արեւմուտքէն փոքր Ասիոյ թերա-
կղզին դուրս ցցուեր է : Հարաւէն հնդկա-
յին ովկիանի երեք ծովածոցերն երեք թե-
րակղզեային մասերն կը կազմակերպեն :
Առաջինն , Արաբական ծովածոցն , կամ Կար-
միր ծովն , Ափրիկէի ու Ասիոյ մէջ տեղէն
Սուէզի պարանոցը կը ձգուի . այն նեղուցը ,
որ ծովածոցն ովկիանի հետ կը կապէ , Պապ-
էլ-Մանտէպ , դուռն արաւստուաց , նաւուց
համար մեծ վտանգներ ունի , խառակներ ,
աւաղակոյտք , բուստի խութեր : Հիւսիսա-
կողմէն կրկնաբար Սուէզի ու Աքաբայի ծո-
վածոցերու կը ձեղքուի ծովն : Երկրորդն ,
Պարսկական ծովածոցն , նմանապէս (Օրմու-
զի) նեղուցով մը ովկիանէն կը զատուի :
Երրորդն , Պէնկալեան ծովածոցն , հարա-
ւային արեւելեան երկու ահագին թերա-
կղզիներն , յայնկոյս եւ յայսկոյս Գանդէսի
Հնդկաստանները կը բաժնէ : Վերջի յիշ-
ուած երկու ծովածոցերն , պարսկականն
ու պէնկալեանն , անուանի են մարգարտի
ճովա խեցեկոյտերով : Արեւելքի ու հիւսիսի
թերակղզիներն աննշան են , այսպէս Բո-
րէա ու Քամշաթքա :

Ասիոյ գետնի ձեւակաղմութեան դա-
լով , միւսներէն աւելի այս երկրաբաժնի
մէջ կը տիրէ տափարակի ձեւն : Ասիոյ գըլ-
խաւոր զանգուածն երկու տափարակներու ,
մեծ արեւելեանի ու փոքրիկ արեւմտեանի
մը կը բաժնուի :

Ասոնց մէջէն կ'անցնին Ասիոյ մեծ հո-
սանքներն , զորս ամերիկեաններ ու Նեղոսը
միայն կը գերազանցեն : Յաճախաբար կըրկ-
նակ կամ երկուորիկ հոսանքներ դուրս կու-
գան Ասիոյ մէջ , այսինքն մեծ գետեր , որք
իրենց ական մէջ մօտիկ , զանազան ուղղու-
թիւններու մէջ անջատ կը հոսին , յետոյ
նորէն կը մօտին , կամ իբր գուգահեռական

հոսանքներ անջատաբար ծովը երթալու կամ վերջնապէս միանալով տեղւոյ մը կազմելու համար։ Ասիոյ արեւմտեան տափարակն կը բռնէ Իրանն, Հայաստանն, Վոքըր Ասիան, Սուրբան ու Արաբիան։

Ասիոյ ամենամեծ մասն, ամբողջի 3/4, բարեխառն գոտիի մէջ կ'իյնայ։ Սիպերիական գոգանի մի մասը միայն ցուրտի մէջ, հարաւային-թերակղզիներու ու կղզիային աշխարհի մի մասը այրածի մէջ, նոյն ինքն հասարակածի վրայէն անդին։ Բայց Ասիոյ պէս, որ հարկադրութիւններու երկրաբաժինը կրնայ կոչուիլ, եւ ոչ մի երկրաբաժնի մէջ գուցէ իրական կլիման չափազիտականէն աւելի տարբեր է։ Լեռներու շատութիւնն, տափարակներու բարձր գլխերն, ամբողջ ծովաքամիներու անհնարին եղած ներգործութիւնն — այս ամենքը կ'ազդեն, որ հիւսիսային ու միջին Ասիան Եւրոպիոյ հետ եղած նոյն լայնութեան աստիճանի տակ անկէ աւելի նշանաւոր ցուրտ կլիմայ մը ունենան։ Ասոր համար ալ զանազան կէտերու վրայի կլիմայի հակադրութիւններն եւ ոչ մի տեղ այսպէս աւելի ահագին են։ Մինչդեռ հիւսիսային Սիպերիոյ մէջ սեպտեմբերին անդին արդէն այնպէս կը սառնի, որ մարդ կրնայ միճել զայն, Արաբիոյ մէջ կիզիչ տաքութիւն մը կը տիրէ ու այնպիսի չոր օդ մը, որ յոկուէն պողպատն բաց օդի մէջ չժանգոտիր։

Ասիական բուսային եւ կենդանական թագաւորութիւններու մէջ ալ կը ներկային այս հակադրութիւններն։ Լօռ ու մամուռ միայն կ'ընկերանան հիւսիսային եղրերուն, այսպէս ասած՝ սիպերիական եղեւնափայտն խեղճուկ կ'արձ ծառ մ'է, ու Տաուրեան լեռներու շեղութիւններու վերայի խնձորներն ոլոռի չափ մեծ են։ Բայց հարաւային եղրերու վրայի արմաւենիներն 65 մեթր բարձրութիւնով վեր կը ցցուին։ Բարեխառն միջոցն այն շատ մը բոյսերու հայրենիքն է, որք յետոյ ընդարձակաբար տիեզերաց վրայ տարածուեցան։ Մեր շատ մը ցորենի տեսակներն բնիկ են հոս։ յուսական դիցաբանութեան նայելով որթատունկն Հնդկաստանէն բերաւ Բաքոն։ Շատ մը տնային կենդանիներու հայրենիքն ալ Ասիոյ մէջ պէտք է փնտռենք մենք․ ձի, էջ, այծ գեռ վայրենի վիճակի

մէջ կը գտնուին հոս։ Ասիէ զատ կենդանիներու մէջն ալ ամենամեծ հակադրութիւններն կը ներկային։ Հիւսիսը կ'ապրի աշխարհի ամենափոքր կաթնատուն, սիպերիական սրամուկն, հարաւը՝ Հնդկային փիղն։ Հիւսիսային փիղն կամ Մամուլն, որ օր մը մազի ծածկոյթով ձմեռնային ցրտէն պաշտպանուած, Սիպերիայէն մինչեւ միջին Եւրոպան տարածուեր էր և որմէ արդէն մարթով ու մտով մէկէն աւելի օրինակ Սիպերիոյ սառուցեալ գետնի մէջ պահուած գտնուեր է, անհետեր է։

Ասիոյ մէջ, որ միւս երկրաբաժնոց մէջտեղը կ'իյնայ ու անոնց ամեն մէկի հետ մերձագոյն շօշափման մէջ կը մտնէ, գուցէ վերջապէս մարդոց ամենահին կայանն ալ կը գտնենք մենք։ Ասիոյ մէջ, որ բոլոր գոտիներու յատկութիւններն ու հակադրութիւններն իր մէջ կը միացնէ, մօտիկ երկրաբաժնոց զանազան դաւառային բնութիւններու համար ամենալաւը կրնային նախապատրաստուիլ ասոնք։ Ամենահին թագաւորութիւններն, զորս պատմութիւնը կը ձանձնէ, Եգիպտոսէն զատ, ասիական են ու Ասիոյ կրկնահոսանքներու մէջ դուրս եկեր են։ Պատմութեան մէջ միշտ այնպէս կը ներկայի գլխաւորաբար այս երկրամասն, որի մէջ շատ բան դուրս կուգայ, որմէ շատ բան յետոյ արեւմտակողմը կը ծաւալի։ Որչափ Ժողովրդային խաղացներ միջին դարու մէջ Ասիայէն այն կողմ անցեր են (Հոնք, Մոնկոլներ)։ Երեք աշխարհակրօններն, որք Աստուած մը կը պաշտեն, բոլորը Ասիոյ մէջ դուրս եկեր են։ Դրսէն եկող մշակութեան դէմ ընդհակառակն գոցեր է ինքզինք Ասիան, ու իր ամենակիրթ ազգերն զարգացման միանգամ հասած աստիճանի վրայ կեցած կը մնան։ Մեր ժամանակին Եւրոպիոյ եւ Ամերիկայի մասին պատմաբանօրէն նահանջ մը կ'ընէ Ասիան, ու իր շատ մը կարեւոր երկիրներն զրեթէ բոլորովին Եւրոպացիներու ձեռքն են։ Բնակիչներու թիւը 820 միլիոն կը գնեն մարդիկ։ Արեւմուտք ու հարաւային արեւմուտքն կը բռնէ Կովկասեան ցեղն, արեւելքն Մոնկոլեանն, հարաւային արեւելքն Մալայեանն։ Այս գլուխաւոր ցեղերու վրայ կուգան դեռ հիւսիսային արեւելքի բեւեռային ցեղերն, որք Եսքիմացիներուն ազգակից կ'երեւին։ Կրօն-

քին նայելով ամենաշատը պրահմայեան ու պուտտայեան հեթանոսներ են : Ուրիշ մեծ միջոց մը իսլամութիւնը կը բռնէ , ամենաքիչն ըրիստոնէութիւնն :

Յ . Մ . ՏՈՒՏՈՒԽԵԱՆ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ

ՄԱՔԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

7-15 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ս Ր Տ Ա Ք Ի Ն — Ն Ե Ր Ք Ի Ն

— 0 —

Շաբաթուս քաղաքական կարեւորագոյն , եւ կրնանք ըսել ուշադրութեան արժանի միակ լուրն է Արեւելեան Րուսիի Պուլղար ժողովրդեան ապստամբութիւնն որ ծագեցաւ անցեալ հինգշաբթի իրիկուն եւ կիրակի առաւօտ ծանուցուեցաւ մայրաքաղաքիս մէջ :

Ապստամբութեան սկզբնաւորութեան նշանը տրուեցաւ Սոփիայի համալսարանի Մասնախմբին կողմէ : Անմիջապէս յետոյ պուլկար կամաւորաց խումբեր անցան Իլ-խանապետութեան սահմանադրւածն եւ դէպի Փիլիպէ յառաջացան : Կուսակալ Կալրիէլ փաշա հրամայեց քաղաքապահ զօրաց՝ ապրտամբաց դէմ քալել , բայց քաղաքապահը միանալով այս վերջնոց հետ Փիլիպէ վերադարձան ուր մնացեալ զօրքերն ալ հետեւելով անոնց , ոտքի ելան :

Ուրբաթ առաւօտ , քաղաքապահ զօրքերը ձերբակալեցին Կալրիէլ փաշան , Տըրիկալքի փաշան , Պօրթուլք զօրավարն , եւ Մնայուն Յանձնաժողովոյ անդամներն ու կառավարական վարչութեանց տնօրէններն . յետ որոյ հռչակեցին Արեւելեան Րուսիի միութիւնն ընդ Պուլկարիոյ : Անմիջապէս առժամայ կառավարութիւն մը հաստատեցաւ նախագահութեամբ Տոքթօր Սթրանքիի :

Կալրիէլ փաշա եւ Կուսակալութեան ուրիշ պաշտօնատարք Սոփիա տարուեցան , իսկ քաղաքապահ զօրաց հրամանատար Տըրիկալքի փաշա իւր իսկ զօրաց ձեռք Փիլիպէի փողոցներուն մէջ քաջընկերացաւ , ժո-

ղովրդեան ծաղու եւ անարգանաց առարկայ լինելով :

Նոյն օր , Րուսիի զօրքերը գրաւեցին երկաթուղոյ կայարաններն եւ խղեցին հեռադրական թերերը մինչեւ ի Մուսթաֆափաշա , Հարմանլի մօտ , Մարիճայի հոյակապ կամուրջն օդն հանելէ յետոյ : Միանգամայն գրաւեցին թրքական սահմանադրւած բոլոր ազմագիրտական կէտերն , բայց այս գործողութիւն չկրցաւ կատարուիլ առանց աւրին թափուելու :

Պուլղարիոյ իշխանը Վառնա կը գտնուէր երբ շարժման առաջին լուրն ստացաւ : Անմիջապէս հեռադրական կայարանը գնաց ուր մնաց քանի մը ժամ : Կլսուի թէ ուսական եւ անգլիական հիւսաւոսք եւս կայարանը կը գտնուէին երբ իշխանն անդ դնաց եւ երկարօրէն խօսակցեցաւ նորահետ : Այս միջոցին , ժողովուրդը խռնած էր կայարանին շուրջ , եւ իրաց ծանրութիւնը գուշակելով , ազադակներ կը բառնար ու տեղեկութիւն կը խնդրէր , — « Բարի լուրեր ունիմ ձեզ , քաղաքացիք , ըսաւ իշխանը կայարանէն դուրս ելնելով . միացանք Րուսիի հետ . ձեր անձնուիրութեան վրայ յոյս ունիմ պատրաստ գտնուեցէ՛ք առաջին նշանին » :

Ապա երկաթուղոյ կայարանը գնաց ուր յատուկ կառախումբ մը կ'սպասէր զինքը Ռուսճուք եւ անտի Սոփիա տանելու համար :

Այս միջոցին Պուլղար Նախարարութիւնը Սոփիայի սպտերուն վրայ ազդարարութիւն մը փակցունել տալով , պաշտօնապէս կը յայտարարէր թէ Միութիւնը կատարուած էր եւ Ալեքսանդր Իշխանն անյապաղ Փիլիպէ պիտի ուղեւորէր : Շաբաթ առաւօտ իշխանական հրամանագիր մը ի դէն կը կոչէր պուլղարական բանակն եւ Ալգային ժողովն ի նիստ կը հրաւիրէր :

Ազգ. ժողովն կազմուած էր Պուլղարիոյ եւ Րուսիի օրէնադիր ժողովներէն , երեքշաբթի օրն յարաասովոր նիստ գումարեցաւ ի Սոփիա , ուր կը գտնուէին այդ օր Ալեքսանդր Իշխանն եւ նախարարապետ Պ. Բարաւէլով :

Ժողովն իւր այդ նստին մէջ վճիռ պիտի տար հետեւեալ երեք հարցերու վրայ :

1. Պուլլարիոյ եւ Արեւելեան Բումէլիի Միութեան հաստատումն :

2. Թէ ի՞նչ տիրազոյս պիտի կրէ այսուհետեւ Աղեքսանդր իշխանը :

3. Պուլլարիոյ նոր մայրաքաղաքի ընտրութիւնը :

Պուլլարի մէջ, այս ապստամբութեան լուրն հասաւ ուրբաթ, կէս գիշերուան մօտ Քաղաքապետին ուղղեալ հեռագրով մը :

Անմիջապէս յետոյ եւ յաջորդ առաւօտը, բոլոր քաղաքային եւ զինուորական իշխանութիւնը նուազարանաց առաջնորդութեամբ եւ Պուլլարական Դրօշը պարզած, համախմբեցան եւ հակիրճ խորհրդակցութեան մը յետոյ հռչակեցին եւ հաստատեցին իրենց Միութիւնն ընդ Պուլլարիոյ : Բոլոր ներկայք մեծ գոհունակութեան մէջ էին եւ ժողովուրդն այս որոշումն ընդունեց ցնծաբեր աղաղակներով :

Քաղաքապետը՝ Պ. Իվանօֆ բանախօսութիւն մ'արտասանելով, ծանոյց ժողովրդեան թէ Միութիւնը կատարուած գործողութիւն մ'էր եւ թէ այսուհետեւ ինչինքնը Աղեքսանդր իշխանին հրամանաց ներքեւ միայն կը ճանչնար :

Ապա քաղաքապալէս զօրաց հրամանատարը՝ Պ. Մէրճանսըն՝ որ բոլորնաջիւղումն մ'է, պուլլարական Դրօշն իւր զօրաց յանձնելով, հաւատարմութեան երդում ընել տուաւ առ իշխանն :

Այսպէսով ժողովուրդն և զօրաց գունդերը ցրուեցան, առաջնորդութեամբ նշուադարանաց որք պուլլարական Մարշը կ'երգէին : Հրամանաւ քաղաքապետին, Պուլլարի բոլոր վաճառատուններն ու խանութները զոյց մնացին երեք օր եւ լուսավառուեցան երեք գիշեր ի նշան ցնծութեան :

Աղեքսանդր իշխանն՝ երբ մէկ կողմէ ծանուցագիր մ'ուղղելով Տէրութեանց՝ կը ծանուցանէր Արեւելեան Բումէլիի միութիւնն ընդ Պուլլարիոյ, միւս կողմէ հեռագիր մը կ'ուղէր առ Վեհ. Սուլթանն, որով, մի եւ նոյն իրողութիւնը կը յայտնէր, գրեթէ սա խօսքերով :

«Համակերպելով Բումէլիի ժողովրդեան եւ իմ պուլլար հպատակացս ըզձից եւ կամաց, պարտաւորեցայ հաւանիլ այս երկու երկիրներու միութեան : Այլ խնդրեմ Ձեր կայս. Վեհափառութենէն որ բարեհաճիք

նկատել Արեւելեան Բումէլին իբր մասն Պուլլարիոյ» :

Այս հեռագիր կայս. պալատն հասաւ երկուշաբթի օրը : Արդէն կիրակիէն սկսեալ նախարարաց խորհուրդն արտասովոր նիստ կընէր անդ, նախագահութեամբ Վեհ. Սուլթանին : Բաճր. Արիֆի, Նայրէտտին և Սէրվեր փաշայներն ալ մասնակցեցան այս նիստերուն որք կը տեւէին մինչև կէս գիշեր : Վեհ. Սուլթանն մեծ գործունէութեամբ կաշխատէր իւր նախարարաց հետ, անձամբ տեղեկանալով ապստամբութեան վայրէն հանող հեռագրաց և հրամաններ տալով : Ղազի Մուսթար փաշա, Միւշիր Ֆուատ փաշա եւ Կօլճ փաշա Ագրիանուպոլիս դըրկուեցան, օսմ. սահմանադիրոյն վրայ համախմբեալ կայս զօրաց բանակի հրամանատարութիւնն ստանցնելու համար : Պուլլարիոյ ամեն կողմերէն ալ մեծ քանակութեամբ պուլլար կամաւորք եւ կանոնաւոր զօրք կը համախմբին Արեւելեան Բումէլիի սահմանաց վրայ :

Արեւելեան Բումէլիի ապստամբութեան լուրն յուզում պատճառած է ի Կրէտէ՝ որոյ բնակիչք, ինչպէս յայտնի է, ամեն ժամանակ թշնամական ոգի մը տածած են Պուլլար ազգին դէմ :

Միաբնից մէջ եւ կղզւոյն ուրիշ կողմերը ցոյցեր տեղի ունեցեր են :

Օսմանեան իշխանութիւնը, աջակցութեամբ օտար հիւպատոսաց, կը ջանան հանդարտեցնել ժողովրդական գրգռումներն :

Ամենախիստ հրամաններ արուած են Մակեդոնիոյ քաղաքային եւ զինուորական իշխանութեանց որպէս զի մեծ խռհիւմութեամբ վարուին ամեն պարագայի մէջ եւ ժողովրդեան հետ շափաւոր վարմունք մ'ունենան, խստիւ հսկելով հանդերձ հանրային բարեկարգութեան պահմանման :

Այդ գաւառի բոլոր կառավարական պաշտօնեայք համերաշխաբար պատասխանատու պիտի ճանչցունին եթէ ամենափոքր անհաճոյ միջադէպ թիսկ պատահի :

—Հելլենական կառավարութիւնը Բ. Դրան ուշադրութիւնն հրաւիրելով Մակեդոնիոյ կացութեան վրայ առաջարկեր է իւր գործակցութիւնը նուիրել օսմ. կառավարութեան, եթէ խռովութիւնը ծագին :

Կըսուի թէ աւստրիական նաւատորմի մէկ մասը Սելանիկի առջեւ հասեր է :

— Կըսուի թէ Պուլղարական ապստամբութիւնն իւր հակահարուածներն ունեցած է նաեւ Ալլանիոյ մէջ : Բայց դեռ ոչինչ տուեղուած է :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԻՇԽԱՆԻՆ

Աւասիկ այն Յայտարարութեան զոր Աղեքսանդր իշխանն ուղղած է իւր ժողովրդին :

Մեք, Աղեքսանդր Ա., շնորհուն Աստուծոյ և ըստ փառաբանաց Ազգին՝ իշխան հիւսիսային եւ հարաւային Պուլկարիոյ, յայտ առնեմք թէ Արեւելեան Բումէլիի Նահանգին ժողովուրդը՝ ներկայ սեպտ. ամսոյ վեցերորդօրը, սոյն Նահանգին կառավարութիւնը ջնջելէ և առժամեայ վարչութիւն մը կազմելէ յետոյ, Արեւելեան Բումէլիի Նահանգը Պուլկարիոյ հետ միացուցած և զմեզ յիշեալ Նահանգին իշխան հռչակած է :

Նկատելով որ սոյն երկու մասերուն միացումը Պուլկար ժողովրդեան սրտին փառաքն է, և այս Նահանգին մեր իշխանապետութեան երկրին հետ միացումը կատարուած իրողութիւն մ'է, ուստի մենք ալ որոշեցինք ընդունիլ Հիւսիսային և Հարաւային Պուլկարիոյ իշխանի տիրադուր :

Սոյն Նահանգին վարչութիւնը մեր վրայ առնելնուս առթիւ, կը յայտարարենք թէ ամեն կերպով պիտի հրականք առանց կրօնի խտրութեան՝ ժողովրդեան ընչից, իրաւանց և պատւոյն պահպանութեան :

Օրինաց եւ խաղաղութեան պահպանման համար ամեն միջոց ձեռք առնուած է. օրինադանցք պիտի պատժուին անաշուտապէս. քաղցր է մեզ յուսալ թէ՛ յայսկոյս և յայնկոյս

Պաշտանաց բնակող սիրելի Պուլկար ժողովուրդն որ այս կարեւոր դէպքերն ուրախութեամբ կը տեսնէ, պիտի փութայ ամեն կերպով օգնել Արեւելեան Բումէլիի և Պուլկարիոյ միացման գործին և մեր սիրելի հայրենեաց միացման և բարգաւաճման համար իւր ձեռքէն եկածն ի գործ դնել: Ամենակալն Աստուած մեր այս ձեռնարկած գործին կատարեալ յաջողութիւն չնորհեսցէ :

Մէծ-Թըքմէ
8 Սեպտ. 1885

ԱՂԵՔՍԱՆԴՐ

ՊՈԻԼՂԱՐԱՎԱՆ ԴՈՐԾԱԿԱՅԱՐՈՒԹԻՒՆ

Բ. Դրան և մայրաքաղաքիս պուլղարական Դործակատարութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւնը խզուած են երեքշաբթի օրէն ի վեր :

Արտաքին գործոց նախարարութիւնն հրաւիրած լինելով պուլղարական գործակատարն պատասխանել սա երկու հարցմանց միոյն, թէ կը շարունակէ՞ր ըստ առաջնոյն Սոփիայի իշխանապետութիւնը ներկայացնել թէ ոչ իբաց նոր կաշուութիւնն հաստատող ընթացքի մը հետեւիլ, գործակատարը պատասխաններ է թէ «Աղեքսանդր իշխանին կողմէ վեհ. Սուլթանին ուղղեալ «հեռագրոյն և մեծ Տէրութեանց ուղեւորեալ շրջաբերականին վրայ, ինք կը ներկայացնէր նաեւ Արեւելեան Բումէլիի կառակարութիւնն միացեալ ընդ «Պուլղարիոյ» :

Այս պատասխանին վրայ, Բ. Դուռը յայտարարեր է պուլղարական գործակատարին թէ այլեւս չէր ճանչնար պուլղարական գործակատարութիւնն և թէ հրահանգ տուած է կառավարական բոլոր պաշտօնատանց իւր չեղեալ նկատել այդ գործակատարութեանէն տրուած որ և է պաշտօնագիր, ինչպէս նաեւ չշտրունակել օսմանեան և պուլղար հպատակաց միջեւ կեցած դատերու ըննութիւնն :

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՄՈՒՆՔ

Ուրբաթ առաւօտ հրատարակեալ կայսերական հրամանի մը համեմատ, Բարձր Սայիտ փաշայի նախարարութիւնն ինկաւ, և նոր նախարարութիւնն հետեւեալ կերպիւ կազմուեցաւ.

ՔԵՍՄԻԼ ՓԱՇԱ, (Էվզաֆի նախարարն) անուանեցաւ նախարարապետ.

ԱԼԻ ՍՍՅԻՊ ՓԱՇԱ, Սպարապետ, պահելով հանդերձ Թնդանօթարանի վերատեսչութիւնը.

ՄԻԻՆԻՐ ՓԱՇԱ, (նախորդ նախարարն Ելեւմտից), Ներքին գործոց նախարար.

ՅԱԿՈՔ ՓԱՇԱ, ՔԱԶԱՋԵՍՆ Ելմտական նախարար, պահելով հանդերձ կայս. Անճնական Գանձու նախարարի պաշտօնը.

ԱՐԻՅԻ ՓԱՇԱ, Նախագահ Պետական Խորհրդոյ.

ՍԷՐՎԷՐ ՓԱՇԱ, Դատական նախարար.

ԱԼԻ ՐԻՉԱ ՓԱՇԱ, (Առաջին քարտուղար կայսերական Պալատան,) Ուղղակի տրոց վերատեսուչ.

ՍԻՒՐԷՅՍ ՊԷՅ, Առաջին քարտուղար կայսերական Պալատան.

ՏՍՏԵՍՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ. Խորհրդական Սրտաքին գործոց նախարարութեան.

(Պերլինի օսմ. դեսպան Սայիտ փաշա Սրտաքին գործոց նախարար անուանած է, և մինչեւ որ Կ. Պոլիս գայ, փոխանորդութիւնը պիտի վարէ Վսեմ Տատեան էֆ: Կըսուի նաև թէ Էտհէմ փաշա Բարիզի դեսպան անուանած է, Էսատ փաշա Պերլինի դեսպան և Ակեահ էֆէնտի՝ Էվզաֆի նախարար եղած է:)

Ա. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգ. Ժողովն այս ուրբաթ առաւօտ նիստ ըրաւ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր: Վարչութեան ատենապետ Վսեմ. Նուրեան էֆէնտի ծանոյց Ժողովին թէ Կաթողիկոսական հաստատման վերաբերեալ սա շտանգրերն հասած լինելով, դռնփակ նստի մէջ պիտի հաղորդուէին Ժողովոյն: Այս առաջարկ բաւական բուռն վիճաբանութիւն մը տեղի տուաւ, յետ որոյ ընդունուեցաւ, որոշուելով դռնփակ նիստ համարել յառաջիկայ ուրբաթ:

Ապա Ժողովն շարունակեց Կրօնական Ժողովոյ համարատուութեան վրայ նախորդ նիստէն բացուած վիճաբանութիւնը, զոր աւարտեց զահունակութեան ըուէ տալով յիշեալ Ժողովին:

—Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը սեպտ. 4 թուով կը հեռագրէ ռուսական բոլոր լրագրաց թէ Վեհ. Զարն՝ Ալեքսանդր Նէվսկիի պատուանշանը շնորհած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհ. Մակար Սրբազանի:

—Ազգ. Վարչութիւնը վաւերացուցած է Երուսաղէմայ Պատրիարքական նորընտիր Տեղապահ Տ. Երեմիա Ս. Եպիսկոպոսի պաշտօնը:

—Նորակազմ Ուսումնական Խորհրդոյ ատենապետ ընտրուած է Կարապետ էֆ. Իւթիւճեան եւ ատենադպիր նշան էֆ. Փափաղեան:

—Ազգային երաժշտապետ Նիկողոս էֆ. Թաչճեան յանկարծամահ վախճանեցաւ շաբթուս մէջ եւ յուղարկաւ որութիւնը կատարուեցաւ մեծ հանգիսի:

SUN FIRE OFFICE
PHOENIX FIRE OFFICE

Կը խնդրուի այն անձերէն, որ 1885 մայիս 17 թուականէն յառաջագոյն ապահովագրական մուրհակներ (քօլէս) ունին, թուական յորում արձակեցինք մեր գրադիրն Պ. Ն. Իզմարիտէս՝ լրագրաց մէջ հրատարակեալ ազդին համաձայն, կարելի եղածին չափ շուտ ներկայել զայնս ի բննութիւն ստորագրելոց իրենց գրասենեկին մէջ, Ղաւթիա, Գարանթինայի փողոց, թիւ 11:

Հ. Ճ. ՀԱՆՍՈՆ
Վ. Վ. ՀԱՆՍՈՆ
Գրառարար

ՄԱՆՈՒԷԼ Կ. ՄԻՐԱՆՈՐԵԱՆ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ուղեւորութիւն և Հայաբնակ Գաւառ

Արեւելեան Տաճկաստան

ՏԵՂՍԳՐՈՒԹԻՒՆՔ

Սուրբ և Զորեմ, Հիւն և Դուրեմ

ՊԻՏՈՆԻ ԳԻՏՆՈՅ


ՄԱՍՆ Գ. և ՎԵՐՋԻՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Զօն առ խրմեան Հայրիկ. Կանխաբան. Հրահանգ. Տեսութիւն մը. Լեզուաբանական դիտողութիւն մը. Նամակներ. Առբերանի գաւառն և իւր գիւղորայքն. Փայքերուն եաց գաւառն և իւր գիւղորայքն. Հարթ գաւառն և Մանգլիերտ՝ հին բերդաքաղաքն իւր գիւղերով. Կարմիր վանքն և կուսաշտական քարը. Աստուծոյ եաց կամ Հացեաց գաւառն (Վերին և Ներքին Պուլանըխներ) իւրեանց գիւղերով. Մէճիտ, լուի գեղջկուհին. Հասան-Կորան և իւր բընակիչքն. Հետաքրքիր յայտնութիւն և հին խաչքար մը. Խնուս գաւառն և իւր գիւղորայքն. Ս. Կարապետի ամայացեալ վանքն. Կարնոյ գաւառն, քաղաքն, գիւղորայքն և վանքայքն. Հայ գիւղացւոց տարեկան կենաց չորս եղանակի համառօտ նկարագիրն իւրեանց բոլոր երեւոյթներով. Քրդաց վերայ համառօտակի. Գաւառական կրճատեա անուանք:

ԺԱՄԱԳՈՐԾ
Գ. Է. ՍԵԼՎԱՃԵԱՆ

244 — ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ ԳԼՈՒԴ — 244



30 142
ԳՐՆԵ ԶՐԾ

Յրանալի ամենէ համբաւաւոր (գործարաններէ միոյն մէջ խիստ խնամք պատրաստել տուած է նշանակեալ գնով նմանը ցարդ չտեսնուած 15 սանդիմեդր երկոյնութեամբ խիստ ձեւաւոր, զարնող, շարաթը մի անգամ լարուող, պատի ժամացոյցներ: որք ընդունելութեան սրահներու, սենեկաց, վարժարանաց եւ գրասենեկաց փայլելու է և յարմարագոյնէն, և որոց երկար տարիներ ամենայն կանոնաւորութեամբ բանիլն կ'երաշխաւորէ:

Յեշեալ վաճառատան մէջ կը գտնուին նաեւ խիստ աժան գներով լաւ բանող ընտիր ժամացոյցներ:

Գաւառներէ եկած յանձնարարութիւնք փութով եւ ճշդութեամբ կը կատարուին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹՈՒՄՔԱՆՈՒԹԻՒՆ

Յօդուք

Հ. ՍՆՂԻ. Վ. ՃԵՐՄԱԿԵԱՆ

Վիէննայի Մխիթարեանց Միաբանութենէն Հ. Անդրէաս վարդապետ ձերմակեանի հեղինակած այս Գործնական Թուարանութեան դասագիրքը բաժնուած է երեք հատորներու, և նպատակն է՝ աշակերտաց մտաց աչքին առջեւ թուարանական գործողութեանց այլեւայլ փոփոխութիւնները պարզ գնել, որպէս զի ինչ որ գործողութեանց մէջ նիւթապէս կը կատարուի, նոյնը մտաց մէջ յայտնագոյնս բացատրուած ունենան:

Գին առաջին և երկրորդ հատորներու 75ական սանդիմ, և երրորդ հատորին՝ 1. 25 սանդիմ:

Կը գտնուի Քանկալթի, Վիէննայի Մխիթարեան Հարց Գրասենեակը:



ՀՐԴԵՆԻ ԴԵՄ ԱՊՍՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ



NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company ՆՈՐԹ-Ն ԳՐԻԹԻՇ ԷՆՊ ՄԷՐԿԵՆԹԻՍՅՈՒՆ

Լոնդոնի և Էյսաքինի ապահովումներն	
Ընկերություն	Անգլ. Լիր.
Արտոնադրության	3,000,000
Բաժանորդագրության դրամագումարներ	2,500,000
Վճարեալ »	625,000
Պահեստի դրամ հրդեհի պատահանումներ	1,592,233
Հակամարտության դեմ	3,841,194
Կենսական պատահանումներ	
Դեմ պահեստի դրամ	6,058,429
Հրդեհի ծիւղէն հատուցած	
1883 տարւոյ	4,186,863
Կենսական ծիւղէն հատուցած	
1883 տարւոյ	551,307
	4,738,172

NORTHERN Assurance company ՆՕՐԹ-Ն ԱՍՍՈՐԵՆ

Լոնդոնի և Էյսաքինի ապահովումներն	
Ընկերություն	Անգլ. Լիր.
Բաժանորդագրության դրամագումարներ	3,000,000
Վճարեալ »	300,000
Պահեստի դրամ հրդեհի պատահանումներ	814,874
Հակամարտության դեմ	4,778,300
Կենսական պատահանումներ	
Դեմ պահեստի դրամ	2,890,474
Հրդեհի ծիւղէն հատուցած	
1883 տարւոյ	520,206
Կենսական ծիւղէն հատուցած	
1883 տարւոյ	251,572
	771,778

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծառայանէ թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրուածքներ մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դեմ ապահովութեան մեծ գիւրութիւններ կը մատուցանէ:

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումով մը, և այսպէս ապահովութեան և գիւրութեան աւելնալովն ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բաշխելու ինքզինքն ներկայացնել:

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մետակայ քաղաքները, գիւղերն և գաւառները:

MARITIME Insurance Cie limited of Liverpool Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովումներն ընկերություն

Դրամագումար 500,000 Անգլ. Լիր

Ստորագրեալը, շրջանաւերու և առաջատարներու մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ:

Գինքերուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուղղութեամբ պէտք է դիմին Կալաթիոյ, Բոմբոյի խանի անկիւնը երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակին, առ.

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակալար յիշեալ Ընկերութեանց
ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈՐԵՍՆ

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԱՊՍՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՆԻ ԴԵՄ

ՐԻԼԱՅԸՆՍ

Ծովային ապահովագրութիւն: -Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիլիամս, Եօրկիատիս խան Պահլէ - դարու, Պոլիս. կամ Ղալաթիոյ, Ալէքսիատի խան թիւ 15:

507

Արտոնատէր Կ. Ս. Իթիիճեօն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԳ ԼՐԱԳՐՈՅ